Фундаментальная библиотека

Գիտություն

ՀՈՒԼԻՍ
№ 5 (182)
2005թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Պրոֆեսոր Լևոն ՋԵՔԻԵԱՆԸ ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ԿԱՃԱՌԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄ

Մամլոյ հաղորդագրութիւն

Պրոֆ. Հ. Լևոն Ջէքիեան իսկական անդամ գիտութիւններու, գրականութեան և արուեստի վենետեան կաճառին

Պրոֆ. Հ. Լևոն Պօղոս Ջէքիեան, նախագահ Պո-Արաքս Մշակութային Միութեան, Վենետիկի Կա Ֆոսկարի Համալսարանի Հայագիտութեան ամբիոնի վարիչ և դասախօս Հայ Եկեղեցական հաստատութիւններու Հռոմի թղթակից անդամ էր Գիտութիւններու, Գրականութեան և Արուեստի Վենետեան Կաճառին, սույն Կաճառի 23 Ապրիլի Վարչական նիստին մէջ ընտրուած է իսկական/գործօն անդամ:

Ընտրութիւնը հաստատուած է Իտալիոյ Մշակութային Գանձերու և Գործունէութիւններու Նախարարին վճռագրով: Անդամակցութեան վկայագիրը յանձնուած է 6 Յունիս, Կիրակի, Վենետիկի Դքսական Պալատին Քուէարկութեանց շքեղ դահլիճին մէջ, Վենետեան Կաճառի 167րդ տարեշրջանի փակման հանդիսաւոր նիստի ընթացքին:

Վենետեան Կաճառը, Հռոմի «Լինչէի» և Միլանոյի «Լոմբարդոյ» Կաճառներուն հետ կը դասուի Իտալիոյ կարևորագույն ակադեմիական հիմնարկներու կարգին:

Դիւան
Պո-Արաքս Մշակութային Միութեան

Գիտության, կրթության և մշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքով է որոշվում պետության վարկն աշխարհում: Նույն հատկանիշով էլ որոշվում է երկիրը կառավարողների քաղաքակրթության աստիճանը:

Կարդացեք 2,3,4 էջերում



ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԻՄՈՆՅԱՆ Ա. Ա.
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Համապատասխան մասնագետների գնահատումներով XXI դարը աչքի կընկնի էկոլոգիայի և գենետիկայի բուռն զարգացումով: Դա պայմանավորված է նրանով, որ ֆիզիկայի, մաթեմատիկայի, քիմիայի և այլ գիտությունների նվաճումների հիման վրա ստեղծված գիտատեխնիկական առաջընթացը մարդ-շրջակա միջավայր համակարգում ձևավորել է բարդ փոխհարաբերություններ, որոնց մեջ հայտնվել է մարդկությունը: Նման փոխհարաբերությունների մեջ ներդաշնակության կարելի է հասնել ոչ միայն էկոլոգիական քաղաքակրթության ձևավորման ճանապարհով, այլև հաշվի առնելով սոցիոլոգիական օրինաչափությունները և մարդու կենսաբանությունը:

Մարդը գենետիկորեն կարող է հարմարվել միջավայրի փոփոխված պայմաններին, սակայն այդ հնարավորությունը անսահման չէ և դա կարող է կատարվել միայն որոշակի նորմայի սահմաններում: Արդի ժամանակաշրջանում միջավայրի պայմանների փոփոխությունները կատարվում են այնպիսի տեմպերով, որոնք անհամատեղելի են մարդու գենետիկորեն ծրագրավորված հարմարողականության հնարավորությունների հետ:

Հարմարողականությունը սերտորեն առնչվում է պոպուլյացիայի գենոֆոնդին բնորոշ առանձնահատկությունների հետ: Գենոֆոնդը գեների ամբողջությունն է, որով օժտված են տվյալ պոպուլյացիայի կամ տեսակի բոլոր անդամները: Օրգանիզմների գենոֆոնդի վերաբերյալ պատկերացումները սկսեցին ձևավորվել և զարգանալ այն բանից հետո, երբ 1953թ. Դ. Ուոտսոնը և Ֆ.Կրիկը բացահայտեցին դեզօքսիռիբոնուկլեինաթթվի (ԴՆԹ) կառուցվածքը: Ցույց տրվեց, որ մի քանի միլիոն մոլեկուլային կշիռ ունեցող ԴՆԹ-ի երկպարույր շղթայի կառուցվածքային տարրերը չորս նուկլեոտիդներն են: Վերջիններս կազմված են ազոտ պարունակող հիմքից, դեզօքսիռիբոզա շաքարից և ֆոսֆորական թթվի մնացորդից: ԴՆԹ-ի շղթայի որոշակի հատվածամասեր, որոնք պարունակում են 1-3 հազ. զույգ նուկլեոտիդներ կոչվում են գեներ, որոնք և պարունակում են այն ժառանգական ինֆորմացիան, որի համաձայն բջջի ցիտոպլազմայում սինթեզվում է մեկ որևէ սպիտակուցի առաջնային կառուցվածքը կամ ամինաթթուներից կազմված պոլիպեպտիդային շղթան: Մարդու ԴՆԹ-ի շղթան կարող է կազմված լինել մինչև 3,3 մլրդ զույգ նուկլեոտիդներից: Եթե նուկլեոտիդներից կազմված նման կառուցվածքը տպագրվելու լիներ, ապա այն կկազմեր երկու հարյուր հազարանոց էջանոց հատորներ: Զարմանք է հարուցում, թե նման ինֆորմացիա պարունակող կառուցվածքը ինչպես կարող էր տեղավորվել յուրաքանչյուր բջջի կորիզի մեջ և այն էլ նուկլեոտիդների կրկնակի հավաքակազմով (որոնցից մեկը ստացվում է մայրական, իսկ մյուսը՝ հայրական օրգանիզմից): Կորիզային կառուցվածքները, որոնք իրենց մեջ կանոնավոր ու խստորեն սահմանված կարգով կրում են պարուրված ԴՆԹ-ի շղթան՝ քրոմոսոմներն են: Միայն 1956-ին հաջողվեց ճշտորեն որոշել մարդու բջջակորիզում քրոմոսոմների քանակը (այն հավասար է 46-ի): XX դարի վերջերին արդեն տարբեր երկրների գենետիկների ջանքերով հնարավոր դարձավ վերծանել մարդու գենետիկական ամբողջ քարտեզը՝ որոշելով յուրաքանչյուր գենի տեղը քրոմոսոմում: Մոտավոր գնահատումներով մարդու գեների քանակը հասնում է 50-100 հազարի: Դրանց 1/3-ը համարվում են պոլիմորֆ (գոյություն ունեն երկու կամ ավելի տարբերակներով՝ ալելներով), իսկ 2/3-ը մոնոմորֆ (ներկայացված մեկ տարբերակով) գեներ:

Բերված այս տվյալների հիման վրա ներկայումս գենոֆոնդը բնութագրվում է որպես ԴՆԹ-ի մոլեկուլում կողավորված պոպուլյացիայի գենետիկական հիշողություն, որը սերնդե-սերունդ փոխանցվում է բնակչության բնական վերարտադրման պրոցեսում: Որպես գենոֆոնդի կառուցվածքի միավոր ընդունվում է պոպուլյացիան, իսկ ժամանակի միավոր՝ սերունդը: Յուրաքանչյուր պոպուլյացիայի գենոֆոնդը բնութագրվում է որոշակի որակական բազմազանությամբ, որը անմիջականորեն կախված է առանձին գեների ալելների հավաքածուից և դրանց դրսևորման հարաբերական հաճախականությունից: Պոպուլյացիայի գենետիկական բազմազանությունը ձևավորվում է հիմնականում պոլիմորֆ գեների հաշվին: Եթե ընդունենք, որ նման գեների թիվը կազմում է 25 հազ. և դրանցից յուրաքանչյուրն ունի երկու ալել, ապա հնարավոր գենոտիպերը կկազմեն մի թիվ, որը հավասար է 3-ի 2500 աստիճան: Աստղաբաշխական այդ մեծությունը ընդգծում է առանձնյակների գենետիկական բազմազանության պոտենցիալ մասշտաբները, որոնք կարող են ամբողջությամբ իրականացվել միայն խոշոր պոպուլյացիաների գենոֆոնդի մեջ: Բանական մարդու տեսակի գենոֆոնդը բարդ ձևով կազմավորված հիերարխիական համակարգ է, որի ամենացածր աստիճանը պոպուլյացիաներն են (առանձին գյուղերի, քաղաքների ազգաբնակչությունը), միջին աստիճանում գտնվում են էթնոսները, ռասսաները, իսկ վերին աստիճանում՝ ամբողջ մարդկությունը:

Գենոֆոնդի մեջ մտնում են ոչ միայն «դրական», այլև «բացասական» գեների տարբերակներ: Գեների առաջին տարբերակը ➢5

Հաշիշը՝ Ֆրանսիայի լեգալ արտադրությունը

Ամբողջ աշխարհում պայքար է գնում թմրանյութերի արտադրության դեմ: Աֆղանստանում, Միջին Ասիայում, Լատինական Ամերիկայում ու Հարավ-Արևելյան Ասիայում բուսական թմրանյութերի դեմ պայքարի համար օգտագործվում են օդուժը, բանակը, հրդեհվում են տասնյակ հազարավոր հեկտար պլանտացիաներ: Իսկ, ահա, Ֆրանսիան, լեգալ հաշիշ է արտադրում, թեև ինքն էլ թմրամոլորության դեմ ակտիվ պայքարողներից է: Բանն այն է, որ խիստ հսկողության տակ գտնվող այդ պլանտացիաների բերքը օգտագործվում է դեղանյութերի արտադրության համար: Բնական թմրանյութերը անփոխարինելի են ցավազրկող դեղամիջոցների արտադրության համար: Տրամաբանությունը պարզ է՝ պետք է հսկել այդ արտադրությունը, քանզի ցավազրկող ցանկացած դեղամիջոց կարող է օգտագործվել թմրամոլների կողմից:

ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, ակադեմիկոս

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ

(Հայաստանի հիմնաքարերը)

Հետադարձ հայացք գցելով Հայաստանի և հայ ժողովրդի բազմադարյան պատմության վրա՝ մենք նորից ու նորից համոզվում ենք, որ մեր ժողովրդի աննկուն աշխատասիրության, ազատ ապրելու և ստեղծագործելու տենչանքի, ուսման ծարավի ու հաղթողի բնավորության շնորհիվ է Հայաստանը գոյատևել մինչ այսօր: Նա իր պատմության բոլոր ելևէջներին հենվել է երեք հոգևոր հիմնաքարերի վրա՝ գիտություն, կրթություն, մշակույթ, որոնք միշտ շաղկապված են եղել վեհ գաղափարներով՝ սերն առ Հայրենիք և հավատն առ Աստված:

Պատահական չէ՝ երբ թվարկում են հայոց պատմությունը կերտող մեծերին՝ թագավորներին, կաթողիկոսներին, զորավարներին և քաղաքական գործիչներին՝ ժամանակն արժեքավորելու առումով, մեծ ակնածանքով հիշում են նույն դարաշրջանի հայ մեծ մտավորականներին՝ Մեսրոպ Մաշտոցին, Մովսես Խորենացուն, Դավիթ Անհաղթին, Անանիա Շիրակացուն, Գրիգոր Նարեկացուն և շատ ուրիշ Մեծերի: Իսկ նոր և նորագույն ժամանակաշրջանների համար՝ Խաչատուր Աբովյանին, Կոմիտասին, Հովհաննես Թումանյանին, Մարտիրոս Սարյանին, Հովսեփ Օրբելուն, Վիկտոր Համբարձումյանին, Արամ Խաչատրյանին և էլի շատ ուրիշների:

Դժբախտաբար, ժամանակները փոխվել են. մտավորականներն արդեն մոռացվում են, գերաշնորհ են համարվում այլ ոլորտի «գործիչները»:

Այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության ապագան, նրա վարկն աշխարհում ես տեսնում եմ գիտության, կրթության և մշակույթի մեջ: Մյուսներն ածանցյալ են այս մնայուն մեծություններին:

Պետականությունը, քաղաքականությունը, տնտեսությունը, ազգային անվտանգությունն արժեքազրկվում են, եթե ամուր կանգնած չեն գիտության հաջողությունների, կրթյալ մարդկանց և բարձր մշակույթի տեր հասարակության վրա:

Այստեղ հիմնականում խոսվելու է գիտության մասին, որը սերտորեն կապված է կրթության և մշակույթի հետ;

Հայ մշակույթի՝ աշխարհում ճանաչում գտած գործերն, ըստ էության, և՛ ձևով, և՛ իմաստով ազգային են, հայկական: Ես չեմ ընդունում ոչ հեռու անցյալում կանոնակարգված կարգախոսը՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական: Ձևը և բովանդակությունը շաղկապված են. բովանդակությունն է թելադրում ձևը, ձևը ածանցյալն է բովանդակության: Իսկական բարձր արվեստը, լինելով ազգային, ունի համամարդկային հնչեղություն, եթե զերծ է ազգային սահմանափակվածությունից, գռեհիկ ընդօրինակումից և անիմաստ «մոդեռնիզմից»: Նա պետք է իմաստավորված լինի համամարդկային արժեք ունեցող գաղափարներով:

Շատ են հայ ստեղծագործողների առաջնակարգ գործերը, որ զերծ են այդ թերություններից, գտել են համընդհանուր ճանաչում և պատիվ են բերում մեր ժողովրդին: Այսպես, օրինակ, Գրիգոր Նարեկացին ոգեշնչեց մեր ժամանակների հայտնի կոմպոզիտոր Ալֆրեդ Շնիտկեին գրելու երգչախմբի համար մի հոյակապ ստեղծագործություն, Ավետիք Իսահակյանի «Աբու-լալա Մահարին»՝ այս սքանչելի փիլիսոփայական պոեմը, թարգմանվեց մի քանի տասնյակ լեզուներով, Մարտիրոս Սարյանի կտավները զարդարում են տարբեր երկրների պատկերասրահները, Արշիլ Գորկին համարվում է ամերիկյան ժամանակակից կերպարվեստի հիմնադիրներից մեկը, Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները հայտնի են ամենուր, Վիլյամ Սարոյանի անունը XX դարի մեծանուն գրողների շարքում է, Սերգեյ Փարաջանովի ֆիլմերը դարձել են դասական, հայոց դուդուկը հնչում է աշխարհի տարբեր անկյուններում և էլի շատ ուրիշ հայկական արժեքներ:

Դժբախտաբար, այսօր հասարակությունը փոխվել է. բարձրարժեք մշակույթը չի ընկալվում, նա կորցրել է իր հմայքը: Լավագույն գրական երկերը համարյա չունեն ընթերցողներ, անուշադրության են մատնված հայ ստեղծագործողների բարձրորակ գործերը: Իսկ մեր բեմահարթակներում և հեռուստատեսային հաղորդումներում, որոշ բացառություններով, գերիշխում են գավառականությունն ու շուկայական արվեստը:

Այս ամենը մտահոգիչ է: Սա շատ լուրջ խնդիր է, որ պահանջում է անհապաղ լուծումներ: Յուրաքանչյուր հապաղում ու բացթողում կարող է օրհասական լինել մեր ժողովրդի համար:

Կրթության հարցը միշտ եղել է Հայ առաքելական եկեղեցու, պետության և ժողովրդի ուշադրության կենտրոնում: Հնագույն ժամանակներից Հայաստանում գործել են դպրոցներ և համալսարաններ: Բավական է հիշել Մեսրոպ Մաշտոցի (V դար), Անանիա Շիրակացու (VII դար), Անիի (XI դար) դպրոցները, Սանահինի ակադեմիան (XII դար), Գլաձորի (XIII դար) և Տաթևի (XIV դար) համալսարանները: Ուսումնական կենտրոններ, որոնք դրեցին Հայոց գիտության և կրթության դարավոր ավանդույթների անկյունաքարերը:

Հատկանշական է, որ ի տարբերություն ժամանակի եվրոպական համալսարանների, որտեղ դասավանդումը տարվում էր լատիներենով, հայկական համալսարաններում բոլոր առարկաները դասավանդվում էին մայրենի լեզվով՝ հայերենով: Այս պայմաններում, կանխարգելելով ազգային սահմանափակվածության վտանգը, հայերեն թարգմանվեցին այլազգի մի շարք հեղինակների ստեղծագործություններ՝ միաժամանակ աշակերտներին ուղարկելով տարբեր երկրներ՝ սովորելու լեզուներ և ձեռք բերելու այլ գիտելիքներ: Պատահական չէ, որ հայերը միակ ժողովուրդն են աշխարհում, որ ունեն կանոնակարգված Թարգմանչաց տոն, իսկ առաջին նախադասությունը, որ Մաշտոցի կողմից թարգմանվել է հայերեն, եղել է Աստվածաշնչի այս խոսքերը՝ «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Գիտության և կրթության մի ամբողջ ծրագիր:

Այսօր Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտում կան բազմաթիվ կնճռոտ և չլուծված հարցեր՝ դպրոցների հնացած շենքերը, ծերացած նյութատեխնիկական բազան, դասագրքերի որակը, դասավանդման մեթոդները, շրջանավարտների մնացորդային ցածր գիտելիքները և ընդհանուր կուլտուրան:

Ընդունելի չեն դրսից թելադրված այն բոլոր «բարեփոխումները», որոնք բերում են դպրոցների փակմանը, ուսուցիչների կրճատմանը, 30-40 աշակերտանոց դասարանների առատությանը, աշակերտի բնակավայրից շատ հեռու գտնվող դպրոցների ցանցի ընդլայնմանը և այլն:

Անհապաղ պետք է ընդլայնել միջնակարգ մասնագիտական կրթության համակարգը: Մեզ պետք են տարբեր մասնագիտությունների միջին օղակի կրթյալ մասնագետներ: Անհնար է պատկերացնել հանրապետության տնտեսության կազմակերպումը առանց այդ մասնագետների:

Հանրապետությունում գործում են բազմաթիվ պետական և մասնավոր համալսարաններ, այլ երկրների համալսարանների մասնաճյուղեր: Կասկածից վեր է, որ Հայաստանում չկա և առաջիկայում ևս չի լինի այդ համալսարանների քանակին համապատասխանող բարձրորակ պրոֆեսորադասախոսական կազմ: Ստեղծված պայմաններում ուշադրության արժանի դասախոսները, եթե գիտական հետազոտությամբ չեն զբաղվում, որպես կանոն, աշխատում են մեկից ավելի համալսարաններում, հսկայական ծանրաբեռնվածությամբ, չնչին աշխատավարձով: Այս ամենը բերում է նրան, որ դասախոսը դադարում է գիտությամբ զբաղվելուց, չի հաղորդակցվում ժամանակակից գիտության հաջողություններին՝ տարեցտարի կորցնելով իր բարձր որակավորումը: Արդյունքում՝ ցածր որակի դասախոսություններ և ցածր որակավորում ունեցող շրջանավարտներ:

Ինչպես հայտնի է, հանրապետության կրթական համակարգը վերակառուցվում է ըստ Բոլոնիայի համաձայնագրի: Ըստ իս, այդ համաձայնագրի պահանջները պետք է իրականացվեն որոշ վերապահումներով: Ուժի մեջ պետք է թողնել այն ամենը, որը տասնյակ տարիներ տվել է լավագույն արդյունքներ, բարձրորակ մասնագետներ, որոնք հաջողությամբ աշխատում են աշխարհի բարձր վարկանիշ ունեցող ձեռնարկություններում, բարձրագույն դպրոցներում, գիտական կենտրոններում:

Հայաստանի Հանրապետության ամենակարևոր հիմնախնդիրներից մեկը կրթական համակարգի բարեփոխումն է և նրա առջև ծառացած բազմաթիվ և բազմաբովանդակ չլուծված խնդիրների լուծումը: Ստեղծված պայմաններում արտակարգ կարևորվում է Կրթության և գիտության նախարարության դերը: Այսօր նա պետք է զբաղվի միայն այդ հույժ կարևոր գործով՝ իրեն ազատելով գիտությունը կառավարելու՝ քիչ պակաս ծանր հոգսից: Վախենալ պետք չէ. գիտությունը ինքնակառավարվող է, և նրա զարգացման գրավականը հենց նրա ազատությունն է:

Պետք է Բոլոնիայի համաձայնագրին միանալ ինչպես նաև եվրոպական այլ կառույցների մեջ մտնել՝ չմոռանալով մեր բազմամյա ձեռքբերումները: Այդ գործընթացը պետք է լինի արժանավայել: Անկասկած, նորն ու լավը պետք է ընդունել՝ այն համապատասխանեցնելով երկրի հնարավորություններին և ավանդույթներին:

Մենք եվրոպացիներ չենք, մենք եվրոպականացված ասիացիներ ենք, որն, ըստ իս, ավելի քիչ պատվավոր չէ, որքան զուտ եվրոպացի լինելը: Մենք, հիրավի, կարող ենք և պետք է հպարտանանք, որ ասիացի ենք, հպարտանանք մեր ծագումով և դարավոր պատմությամբ: Համոզված եմ, որ ճապոնացիները և չինացիները ևս հպարտ են, որ իրենք ասիացի են, հպարտանում են դարերից եկող համամարդկային արժեք ունեցող գիտությամբ, կրթությամբ, մշակույթով, ազգային ավանդույթներով, իրենց դինամիկ առօրյայով և կանոնակարգված ապագայով: Մենք հին ժողովուրդ ենք, բայց պետք է ամեն ինչ անենք, որ հնացած չդառնանք, չդառնանք ժողովուրդ՝ առանց ազգային ավանդույթների, ժողովուրդ՝ առանց ապագայի: Ուրեմն, եկե՛ք որոշ վերապահումներով նայենք Հայաստանի եվրոպականացման գործընթացին:

Գիտությունը, ինքնին լինելով «պահպանողական», միաժամանակ մարդկային գործունեության առավելագույն դինամիկ և առաջադիմական ոլորտներից մեկն է: Նա իր ներուժով ի վիճակի է կերպարանափոխել տնտեսությունը, հասարակությունը, հասարակական հարաբերությունները, քաղաքականությունը և, ընդհանրապես, երկիրն ամբողջությամբ:

Գիտությունը տարիների ընթացքում աննկատ փոխել է Հայաստանի Հանրապետությունը՝ այն դարձնելով զարգացած արդյունաբերություն և գյուղատնտեսություն ունեցող երկիր: Հանրապետության քիմիական, լեռնամետաղագործական, ռադիոէլեկտրոնային, մանրէաբանական արդյունաբերությունները, ճշգրիտ գործիքաշինությունն ու մեքենաշինությունը, կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծումը և այլն՝ արդյունք են մեր գիտության հաջողությունների:

Միշտ էլ բարձր է եղել հայ գիտության մակարդակը: Մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության հայկական գիտական դպրոցները հայտնի են աշխարհում: Հայ գիտնականների ստացած արդյունքները գտել են համընդհանուր ճանաչում և լուրջ ներդրում են համաշխարհային գիտության մեջ: Մեր գիտնականների աշխատությունները թարգմանվել և հրատարակվել են աշխարհում բարձր գիտական վարկանիշ ունեցող երկրներում՝ ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Գերմանիա, Չինաստան, Լեհաստան և այլուր: Նրանց մենագրությունների հիման վրա հատուկ դասընթացներ են կարդացվել աշխարհի տարբեր համալսարաններում: Նրանք ստացել են բազմաթիվ պետական և ակադեմիական բարձր պարգևներ ու մրցանակներ...

Անկասկած, Հայաստանի համար կարևոր իրադարձություն էր անցյալ դարի առաջին կեսին Երևանի պետական համալսարանի և Գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Այդ ակտերով իրականություն դարձան հայ մտավորականության դարավոր իղձերը: Ահա թե XX դարի սկզբին ինչ է գրել Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերենով և հայ գիտնականների կաճառ, գիտության օջախ՝ Հայկական ակադեմիա: Եվ պետք է ստեղծել հայոց համալսարան, ուր կարելի լինի բարձրագույն գիտությունները ավանդելու սովորել հայերենով»:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան հանրապետության գիտական բարձրագույն մարմինն է, կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուն: Նա կոչված է համակարգելու հանրապետությունում կատարվող գիտական հետազոտությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հիմնարար գիտությունների զարգացման վրա:

Հիմնարար գիտությունները դուրս են պետական սահմաններից, նրանց ստացած արդյունքները համընդ- ➤3

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ....

➢2 հանուր են, մեկը մյուսին լրացնող:

Հիմնարար գիտությունները զարգանում են անընդմեջ՝ սնվելով նոր գաղափարներով և գիտական հայտնագործություններով: Հին գաղափարները կրկնելը, ընդլայնելը, զարգացնելը միշտ չէ, որ ռացիոնալ է, քանզի կրկնությունը, լինելով ուսման մայրը, շատ հաճախ դառնում է առաջընթացի խորթ մայրը: Իսկ հիմնարար գիտությունը հենց առաջընթացի գրավականն է:

Հայագիտությունը, անկախ նրա «մոդեռնիստական» անվանակոչումներից, հիմնարար գիտությունների շարքում ունի իր ուրույն և պատվավոր տեղը: Հայագիտական հետազոտությունները, ունենալով ազգային երանգավորում, միշտ եղել են համաշխարհային գիտության ուշադրության կենտրոնում, քանզի կառուցվել են հազարամյակների խորքից եկող հենքի վրա:

Վերջերս փորձ է արվում «խմբագրել» մեր պատմությունը՝ հայկական պատմական հուշարձանները վերագրելով այլ ժողովուրդների և կամ փոխելով դրանց ժամանակագրությունը: Չպետք է թույլ տալ, որ մի շարք օտարածին կամ էլ «հայրենական» գիտականորեն չհիմնավորված գաղափարներով խեղաթյուրվեն մեր պատմությունն ու մեր պատմագիտության հիմնադրույթները:

Հիմնարար գիտությունները, ինչպես բոլոր քաղաքակիրթ երկրներում, պետք է հովանավորվեն պետության կողմից: Դրանք ամբողջապես պետք է ֆինանսավորվեն պետական բյուջեի միջոցներից և, առանձին դեպքերում, անշահախնդիր բարերարների կողմից:

Երկրի ապագայի և ազգային անվտանգության տեսակետից բավական վտանգավոր է, երբ հիմնարար գիտությունները ֆինանսավորվում են դրսից, հատուկ հիմնադրամների կողմից՝ իրենց հովանավորած կամ թելադրած ծրագրերով, արտասահմանյան համակարգողի մասնակցությամբ: Ամեն տեսակի գումար չէ, որ կարելի է ընդունել: Ինչպես ասում են, դրամը ևս կարող է «հոտ» ունենալ: Բանն այն է, որ հիմնարար գիտությունների ասպարեզում ստացված արդյունքները և որոշումները, որոնք ընդունվում են այդ արդյունքների հիման վրա, ի վիճակի են որոշակիորեն ազդելու պետական կառավարման ինստիտուտների քաղաքականության վրա՝ զգալիորեն փոխելով երկրի զարգացման՝ պետության և ժողովրդի կողմից ընդունված ծրագրերը:

Կիրառական գիտությունները, որոնց հիմքում ընկած են հիմնարար գիտությունները, ավելի քիչ կարևոր չեն հանրապետության համար, քան բուն հիմնարար գիտությունները: Այդ գիտությունները պետք է զարգանան համընթաց՝ մեկը մյուսին հարստացնելով: Ի դեպ, պետք է զարգացնել այն կիրառական գիտությունները, որոնք հեռանկարային են հանրապետության տնտեսական առաջընթացի համար: Այսօր մեզ համար առաջնային են էներգետիկայի հարցերի և հատկապես էներգիայի վերականգնվող աղբյուրների, լեռնամետաղագործության հիմնախնդիրների ուսումնասիրությունը, ծարտարագիտական սեյսմաբանության գծով հետազոտությունները, էլեկտրոնային և ռադիոֆիզիկական սարքերի և համակարգերի, մանրէաբանական պրոցեսների նոր տեխնոլոգիաների, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրության ստեղծումը, նոր, տվյալ հատկություններով օժտված նյութերի, տեղեկատվական և կառավարման համակարգերի ստեղծումն ու ուսումնասիրությունը:

Կիրառական գիտությունների բազմաբովանդակ արդյունքները տնտեսության մեջ ներդնելու համար հույժ կարևոր է նոր բարձր տեխնոլոգիաների առկայությունը: Անհապաղ պետք է սկսել լայնածավալ հետազոտություններ բարձր տեխնոլոգիաների ասպարեզում:

Կիրառական գիտությունները, որոնք զգալիորեն կապված են մեծածավալ ֆինանսական ներդրումների հետ, զարգացման պրակտիկայի տեսակետից միշտ պետք է գտնվեն կառավարության ուշադրության կենտրոնում: Բոլոր տնտեսական պայմանագրերը, որոնք կնքվում են պետական կամ մասնավոր ձեռնարկությունների հետ, պետք է պարունակեն հոդվածներ տվյալ տնտեսական գործունեության հետ առնչվող կիրառական գիտությունների ֆինանսավորման մասին:

Գիտության զարգացումը սերտորեն կապված է երկրի տնտեսական, ռազմական հզորության, քաղաքական մթնոլորտի և հասարակության սոցիալական վիճակի հետ: Պետությունը և հասարակությունը պետք է լավ գիտակցեն, որ ժամանակակից բարեկեցիկ և քաղաքակիրթ երկիր չի կարելի ստեղծել՝ առանց գիտության ձեռքբերումների վրա հենվելու: Այլ ճանապարհ չկա: Զարմանալին այն է, որ մարդիկ միանգամայն անտարբեր են գիտության նկատմամբ, թեև անուղղակիորեն օգտվում են գիտության բարիքներից՝ գեղեցիկ ավտոմեքենաներ, գերբարձր արագության ինքնաթիռներ, ռադիո և հեռուստատեսություն, էլեկտրական լույս և ջեռուցում, համաշխարհային ինտերնետային կապ և տեղեկատվություն, կյանքի անբաժան ընկեր բջջային հեռախոս և շատ ու շատ ուրիշ գեղեցիկ բաներ: Այս ամենն արդյունք են գիտության հաջողությունների, և դա պետք է ըմբռնեն թե՛ հասարակությունը և թե՛ երկիրը կառավարողները:

Հայաստանն ունի բազմատեսակ բնական հարստություններ, բայց դրանք այնքան չեն, որ դրանց ուղղակի օգտագործումը երկիրը դարձնի գեղեցիկ ու բարգավաճ: Սակայն կա զորեղ ինտելեկտուալ ներուժ, որն ի վիճակի է իրականացնելու ժամանակակից ինովացիոն քաղաքականություն և՛ տնտեսական ոլորտում, և՛ քաղաքական ինստիտուտներում: Այն իրականացնելու համար պետք է ունենալ հստակ ձևակերպված օրենքներ և իրավական դաշտ: Հանրապետության ինովացիոն գործընթացը կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետք է ստեղծել ինովացիայի և բարձր տեխնոլոգիաների հանձնաժողով, որի կազմում պետք է ընդգրկվեն գիտնականներ, տնտեսության առաջատար մասնագետներ, ֆինանսիստներ և գործարարներ:

Մեզ համար ընդունելի չէ «հասնել և անցնել» կարգախոսը, քանզի մենք չենք կարող ո՛չ հասնել և ո՛չ էլ անցնել: Մենք պետք է գնանք ուրույն ճանապարհով, մեզ պետք են նոր ճանապարհներ, զանգվածային ինովացիոն քաղաքականություն, ինովացիոն երկիր: Այնժամ կարող է և գտնենք մեր պատվավոր տեղը քաղաքակիրթ աշխարհում: Հայաստանն այդ հնարավորություններն ունի, քանի որ ինովացիայի հիմքում ընկած են հիմնարար գիտությունները, որտեղ արդեն մենք ունենք մեր որոշակի տեղն աշխարհում:

Անկասկած, բարեփոխումների կարիք ունի նաև հանրապետության գիտության համակարգը: Ահա ուշադրության արժանի մի քանի դրույթներ:

Գիտությունը պետք է համալրվի երիտասարդ, հեռանկարային այնպիսի մասնագետներով, ովքեր ամուր կանգնած են նախորդ սերունդների կողմից ստացված գիտական հիմնարար արդյունքների վրա, շարունակում են ճանաչված գիտական դպրոցների ավանդույթները՝ դրանք հարստացնելով նոր գիտական արդյունքներով, որոնք հիմք կծառայեն նոր գիտական դպրոցների ստեղծման համար:

Անհրաժեշտ է թարմացնել գիտահետազոտական ինստիտուտների գիտատեխնիկական բազան: Գիտությունը պետք է սպառազինվի նոր և նորագույն գիտական սարքերով: Հին և հնամաշ սարքերի օգնությամբ կարելի է ստանալ միայն «հին և հնամաշ» գիտական արդյունքներ:

Ընկել է հրատարակվող գիտական աշխատությունների որակը: Շուկայական հարաբերությունների պայմաններում մի շարք մասնավոր և, ինչու չէ, որոշ պետական հրատարակչություններ և նաև տպարաններ, առանց լուրջ գիտական գրախոսության, տպագրում են աշխատություններ, որոնք պատիվ չեն բերում մեր գիտությանը: Անհապաղ պետք է միջոցներ գտնել՝ վերացնելու ստեղծված անթույլատրելի կացությունը:

Եզակի գիտական սարքավորումները համատեղ օգտագործելու նպատակով պետք է շարունակել ստեղծել ինքնաֆինանսավորվող գիտական կենտրոններ՝ թույլ չտալով, սակայն, որ դրանք վերածվեն սովորական գիտահետազոտական ինստիտուտների և կամ հայտնի ինստիտուտների կցորդների՝ բյուջետային ֆինանսավորմամբ:

Անընդունելի է, երբ գիտահետազոտական ինստիտուտներն ու լաբորատորիաները գրեթե ամբողջությամբ գտնվում են Երևանում: Հանրապետության գիտական ենթակառուցվածքն առողջացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ-ն պետք է ունենա իր մասնաճյուղերը կամ կենտրոնները հանրապետության առանձին տարածաշրջաններում: Մասնավորապես, պետք է վերակենդանացնել Գյումրիի մասնաճյուղի գործունեությունը՝ որպես ՀՀ ԳԱԱ հյուսիսային մասնաճյուղի: Նոր հարավային գիտական կենտրոն պետք է ստեղծել Գորիսում՝ նրա վրա դնելով նաև Լեռնային Ղարաբաղի գիտական օջախների հետ համագործակցության կազմակերպումը:

Քննության առարկա պետք է դառնա այն գիտական միավորումների հարցը, որոնք ժամանակին օտարվել են Հայաստանի գիտությունների ակադեմիայից: Պետք է մտածել դրանց մի մասը ԳԱԱ համակարգ վերադարձնելու մասին:

Պաշտպանվում են ցածր որակի ատենախոսություններ՝ հաճախ գիտական նորմերի խախտումներով: Պետք է վերանայել գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների թվաքանակը, կազմը և ենթակայությունը: ԲՈՀ-ը պետք է գործի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր:

ՀՀ ԳԱԱ կազմում պետք է ունենալ բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ դասավանդումը կազմակերպվի հատուկ ծրագրերով, դասավանդման նոր մեթոդներով և այնպիսի դասախոսական կազմով, որը համալրված է գիտահետազոտական ինստիտուտների ակտիվ ստեղծագործող գիտական աշխատակիցներով:

Ժամանակն է ՀՀ ԳԱԱ հովանու ներքո վերականգնել Մոսկվայի Լազարյան ճեմարանը՝ որպես Հայ-ռուսական համալսարան՝ հայագիտության, արևելագիտության և միջազգային իրավագիտության ֆակուլտետներով:

Հայաստանի Հանրապետության տնտեսական կյանքը, ներքին և արտաքին քաղաքականությունը, ազգային անվտանգության հարցերը կարիք ունեն գիտական վերլուծության: Այս և նման այլ հարցերի ուսումնասիրության համար, ըստ իս, անհրաժեշտ է ՀՀ ԳԱԱ համակարգում ունենալ Ազգային անվտանգության և ստրատեգիական հարցերի գիտահետազոտական ինստիտուտ, որը համալրված լինի տարբեր ասպարեզների բարձրորակ մասնագետներով: Աստված չանի՝ այդ ինստիտուտը համալրվի պաշտոնամոլության ցավով տառապող կոնյունկտուրային քաղաքագետներով:

Հսկայական է ՀՀ ԳԱԱ և հանրապետության առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցության դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության կայացման, զարգացման և գոյատևման գործում: Ի դեպ, արդյունավետ համագործակցություն հնարավոր է իրագործել միայն առողջ, քաղաքակիրթ և ստեղծագործ մտավորականության առկայության պայմաններում: Հիշենք, որ իսկական մտավորականը անհատականություն է, նա, որպես կանոն, հանդես է գալիս իբրև քննադատական և կառուցողական ընդդիմություն: Պետությունը պետք է հենվի այդ մտավորականների վրա. չէ՞ որ հայտնի է՝ հենվել կարելի է այն բանի վրա, որ դիմադրում է: Բայց, ավա՜ղ, այսօր այդպես չէ: Կառավարման տարբեր ոլորտի մեծ ու փոքր գործիչներ շատ հաճախ հենվում են քծնող, անհարկի ծառայություններ մատուցող, արկածախնդիր «մտավորականների» վրա:

Որոշակի բարեփոխումների կարիք ունի նաև ՀՀ ԳԱԱ կառավարման համակարգը:

Անհրաժեշտ է ավելի սերտացնել բաժանմունքների և ինստիտուտների կապը: Բաժանմունքները, համախմբելով ինստիտուտները և պրոբլեմային խորհուրդները, պետք է հանդես գան որպես գիտության տվյալ ասպարեզի համակարգողը հանրապետությունում: Կարծում եմ՝ պետք է վերանայել բաժանմունքների կազմը՝ այն դարձնելով ավելի նեղ մասնագիտական:

Հաշվի առնելով, որ հանրապետությունում ի վերջո գերակայելու է մասնավոր սեփականությունը, ՀՀ ԳԱԱ կանոնադրության մեջ պետք է տեղ գտնեն հոդվածներ, որոնք կարգավորում են գիտական արդյունքների, այսինքն՝ ինտելեկտուալ սեփականության շուկայական իրացման հարցերը:

Պետք է կրճատել Ակադեմիայի նախագահության կազմը՝ այն դարձնելով ավելի օպերատիվ և գործնական: Նախագահության նիստերում պետք է լսել հանրապետությունում ստացված առավել հետաքրքրություն ունեցող գիտական արդյունքները: Նախագահությունը պետք է դառնա գիտության բարձրագույն փորձագետը հանրապետությունում:

Ընդունելի չէ ԳԱԱ փոխպրեզիդենտների և ակադեմիկոս-քարտուղարների պաշտոնների համատեղումը: Դա Ակադեմիայի կառավարման տեսակետից ռացիոնալ չէ, եթե չասենք՝ հակակառուցողական է:

Վերջերս Հայաստանի մի շարք աստիճանավորված և իրենց վիճակից չբավարարված որոշ գիտնականներ իրենց գիտական անհաջողությունները տեսնում են ՀՀ ԳԱԱ կառուցվածքի, նախագահության անդամների և տարեց ակադեմիկոսների մեջ: Նրանք առաջարկում են վերակառուցել Ակադեմիան՝ ըստ արևմտյան մոդելների, վերաատեստավորել տարեց ակադեմիկոսներին և, վերջապես, քննարկել Ակադեմիայի գոյության անհրաժեշտության հարցը:

Վաստակաշատ տարեց գիտնականների մասին խոսելն առնվազն անբարոյականություն է և անհարիր մեր ժողովրդին: Չէ՞ որ այդ մարդիկ իրենց բազմամյա գիտական գործունեությամբ փառք ու պատիվ են բերել հայոց գիտությանը, Հայաստանին: Ի դեպ, ես գիտեմ մեծ թվով տարեց գիտնականների, ովքեր այսօր էլ ստեղծագործում են և ավելի գործունյա են, քան նրանց ինքնահավան երդվյալ քննադատները:

Անհեթեթություն է Ակադեմիան վերակառուցել ըստ արևմտյան մոդելների: Ինչու քանդել մի ամբողջ համակարգ, որն իր ստեղծման օրից ձեռք է բերել բարձր ճանաչում գիտական աշխարհում՝ տալով միջազգային արժողության գիտական ստեղծագործություններ: Նա այսօր էլ իր «հնացած» կառուցվածքով, իր վարած գիտական քաղաքականությամբ Հայաստանի Հանրապետության առաջընթացի կարևոր գրավականներից մեկն է: Այնուհետև չպետք է մոռանալ, որ մենք չունենք և առաջիկայում ևս չենք ունենա այնպիսի ֆինանսատեխնիկա-

➢4

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ....

➢3 կան հնարավորություններ, ինչպիսիք ունեն աշխարհում ճանաչված գիտական կենտրոնները, որոնց համար Գիտությունների ակադեմիան ուրիշ դեր ու նշանակություն ունի:

Ինչ վերաբերում է ՀՀ ԳԱԱ-ն լուծարելու ապազգային գաղափարին, ապա կցանկանայի հիշեցնել հետևյալը: Այդօրինակ իրադրություն կար նաև Ռուսաստանում, բայց դա ի չիք եղավ, երբ երկրի պրեզիդենտը հայտարարեց. «Ոչ մի նմանատիպ բան, որ կարող է բերել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի լուծարմանը, երկրի ղեկավարների կողմից չի սատարվի»:

Գիտությունների ազգային ակադեմիան վերափոխելիս մենք պետք է գնանք մեր ընտրած ճանապարհով՝ վերցնելով և տեղայնացնելով բոլոր այն լավը, որ կա ուրիշ ակադեմիաներում՝ չխախտելով պատմականորեն ձևավորված մեր լավագույն ավանդույթները: Այստեղ արժե հիշատակել Նոբելյան մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ժ. Ալֆյորովի խոսքերը. «Իսկապես Գիտությունների ակադեմիան պահպանողական կազմակերպություն է, որով կարելի է հպարտանալ, չէ՞ որ մեկը պետք է լինի, որ պահի գաղափարներն ու ավանդույթները»:

Այսօր Հայաստանում գործում են մեծ թվով հասարակական ակադեմիաներ, օտարերկրյա ակադեմիաների մասնաճյուղեր, որոնց գործունեությունը, դժբախտաբար, որոշ բացառություններով, աջ ու ձախ ակադեմիկոսի կոչում շնորհելն է, պատվոգրեր ու դիպլոմներ հանձնելը, մեծանուն գիտնականների անուններ կրող մեդալներով պարգևատրելը, գերպատվավոր տիտղոսներ շնորհելը և այլն: Այսօր Հայաստանում ավելի շատ ակադեմիկոսներ ունենք, քան ոչ շատ հեռու անցյալում՝ գիտության դոկտորներ: Ազատություն, անկախություն, ժողովրդավարություն՝ չի նշանակում հանրապետության գիտական կյանքը «արևելյան շուկայի» վերածում:

Ես դեմ չեմ հասարակական ակադեմիաներին, բայց նրանք պետք է լինեն իսկապես հասարակական, թվով՝ սահմանափակ, և կատարեն հանրօգուտ աշխատանք հանրապետության համար և ոչ թե զբաղվեն ցուցամոլությամբ՝ ի լուր ամենքի:

Սի քանի խոսք ուղեղների արտահոսքի մասին: Անշուշտ, ցանկալի չէ, որ գործունյա մտավորականը ստեղծագործության համար բարենպաստ պայմանների բացակայության պատճառով հեռանա Հայաստանից: Սակայն դա ունի նաև իր դրական նշանակությունը: Վերջին հաշվով, ընդլայնվում է հայ գիտնականների գործունեության դաշտը, և, որպես կանոն, Հայաստանից հեռացած գիտության իսկական նվիրյալը չի խզում մայր գիտության հետ ունեցած իր գիտական կապերը՝ շարունակելով համագործակցությունը Հայաստանում աշխատող իր գործընկերների հետ: Եվ եթե ժամանակին ստեղծվեն բարենպաստ պայմաններ, նրանք հայրենիք կվերադառնան գիտական նոր գաղափարներով:

Ամենևին չեմ ընդունում այն հայտարարությունները, թե Հայաստանից հեռացել է երիտասարդ մտավորականության լավագույն մասը: Անհեթեթ հայտարարություն, որը տարածում են հայրենիքից հեռացած շնորհազուրկ մասնագետները և դժգոհության ցավով տառապող մտավորականները: Հայաստանի Հանրապետությունում կան և գործում են աշխարհում ճանաչված մտավորականներ և տաղանդավոր երիտասարդ գիտնականներ, որոնք շատ ավելի առաջադեմ ու լուսավոր են, քան հեռացածներից շատերը:

Սփյուռքահայ մտավորականության մեջ կան աշխարհում ճանաչված բարձրորակ մասնագետներ: Նրանց հետ պետք է համագործակցել հավասարը հավասարի հետ նշանաբանով: Բայց, դժբախտաբար, մեր գերհարգալից վերաբերմունքը նրանց նկատմամբ, կոչումներ և պարգևներ շնորհելու շռայլ քաղաքականությունը հաճախ ընկալվում է յուրովի: Նրանց թվում է, թե իրենք ավելի մեծ են ու տաղանդավոր, և իրենց կոչումը լուսավորելն է մեզ: Մենք բոլորս պետք է քաջ գիտենանք, որ աշխարհով մեկ սփռված հայությունը հայ է մնացել շնորհիվ մայր գիտության, կրթության և մշակույթի, որոնք գործում են, քանի դեռ կան Հայ առաքելական եկեղեցին և Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի գիտությունն իրավունք չունի սահմանափակելու իր միջազգային կապերը՝ համագործակցելով միայն սփյուռքահայ գիտնականների հետ: Մենք պետք է խորացնենք և ընդլայնենք մեր համագործակցությունը աշխարհի բոլոր առաջատար գիտական կենտրոնների հետ:

Գիտության զարգացման և ինովացիոն քաղաքականության հարցերում մեծ է գործարար մարդկանց դերը: Նրանք պետք է նորովի նայեն իրենց գործունեությանը՝ գիտակցելով, որ իրենց գործի հետագա առաջընթացը պայմանավորված է իրենց ոլորտի գիտության առաջընթացով: ՀՀ ԳԱԱ-ն երախտագիտությամբ է հիշում այն գործարար մարդկանց անունները, որոնք անշահախնդիր օգնում և օժանդակում են գիտության զարգացմանը: Մենք ակնածանքով ենք նշում նրանց անունները՝ Հրանտ Վարդանյան, Արա Աբրահամյան, Լուիզ-Սիմոն Մանուկյան, Հովնանյան եղբայրներ, Կյուլպենկյան հիմնադրամի տնօրինություն:

Հսկայական է պետության և հասարակության դերը գիտության, կրթության և մշակույթի զարգացման գործում: Հանրապետության նախագահից մինչև շարքային քաղաքացին պետք է գիտենան, որ Հայաստանի Հանրապետության համար գիտությունը, կրթությունը և մշակույթը առաջնային են: Պետությունը, պետական, քաղաքական և հասարակական գործիչները արմատապես պետք է փոխեն իրենց վերաբերմունքն այդ մնայուն իրողությունների նկատմամբ: Հայտնի է, որ միայն գիտականորեն հիմնավորված տնտեսությունն ու պետական քաղաքականությունն են ի վիճակի արմատապես բարեփոխելու հանրապետության սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական իրավիճակն ու ազգային անվտանգության մակարդակը և ապահովելու պետության կայունությունն ու արժանավայել տեղը քաղաքակիրթ երկրների շարքում:

Այսպես, գիտության և հատկապես Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի առջև դրված են գերբարձր խնդիրներ: Այդ խնդիրները լուծելու համար նախ և առաջ պետք է լուծվի գիտության ֆինանսավորման հարցը: Նա պետք է ֆինանսավորվի գոնե աշխարհում ընդունված նվազագույն չափաքանակով: Դժբախտաբար, գիտությունը ֆինանսավորվում է բյուջեի ծախսային մասի 1 տոկոսի չափով, որը երեք անգամ պակաս է ընդունվածից: Չնայած այս անընդունելի իրավիճակին՝ գիտության նվիրյալներն աշխատում են չնչին (վարկաբեկիչ) աշխատավարձով, ստանալով ուշադրության արժանի նոր գիտական արդյունքներ: Եվ բնական է ամերիկյան պաշտոնական փորձագետների զարմանքն ու վերջերս արած հայտարարությունը. «Չնայած բոլոր դժվարություններին, Հայաստանի գիտնականները պահպանել են իրենց բարձր մակարդակը և դրամական միջոցների խիստ սահմանափակվածության պայմաններում հասել են տպավորիչ արդյունքների»:

Բացարձակապես ընդունելի չեն այն հայտարարությունները, թե Հայաստանում այլ հնարավորություններ չկան: Ֆինանսական հնարավորություններ կան, դրանք պետք է բացահայտել ու բաշխել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ապագան և ոչ թե օրվա կոնյունկտուրան: Ըստ իս, անհապաղ պետք է վերանայել բյուջից սնվող կազմակերպությունների թվաքանակը, դրանց անհրաժեշտությունը և ծախսերի չափը: Այսպես, օրինակ՝

Հիմնավորված չէ հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների թվաքանակը: Գիտակ մարդիկ ասում են, որ եթե մոռացվեն քաղաքական մոտիվները, դրանց թիվը կարելի է կիսով չափ պակասեցնել:

Ակնհայտ է, որ ոչնչով հիմնավորված չէ Ազգային ժողովի պատգամավորների թվաքանակը: Համեմատելով այն մեր կարգի երկրների պառլամենտների հետ՝ դժվար չէ նկատել, որ այն ուռճացված է:

Անհասկանալի է հանրապետության Ազգային հեռուստատեսության ֆինանսավորումը բյուջեից: Աշխարհին է հայտնի, որ հեռուստատեսությունն առավել շահութաբեր ձեռնարկություններից է և ինքը կարող է բյուջեն սնել մեծածավալ հարկերով: Ինչ վերաբերում է պետական, կառավարական և այլ բյուջետային կազմակերպություններին, նրանք գործի համար անհրաժեշտ հեռուստահաղորդումները կազմակերպելու համար սեփական բյուջեում պետք է նախատեսեն համապատասխան գումար:

Կան նաև այլ ռեզերվներ՝ կապված բուն գիտության կազմակերպման հետ:

Կիրառական գիտություններով զբաղվող ինստիտուտները և գիտական կենտրոնները կարող են համապատասխան արտադրական ձեռնարկությունների հետ համատեղ ստեղծել ինքնաֆինանսավորվող գիտաարտադրական միավորումներ, տեխնոպարկեր, որոնք, իրացնելով իրենց գիտատար արտադրանքը, ի վիճակի կլինեն ֆինանսավորել մայր գիտությունը և գիտությունն ընդհանրապես:

Գիտահետազոտական ինստիտուտներին տալով ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ՝ նրանց զրկել են սեփական ինտելեկտուալ հարստության շուկայական, գիտության համար անհրաժեշտ, ազատ և լայն իրացման հնարավորությունից: Վերացնելով այդ արգելքը՝ ինստիտուտները նման եղանակով ստացած եկամուտները կօգտագործեն գիտության հետագա զարգացման համար:

Ի դեպ, հաճախ պնդում են նաև, թե գիտությունը շահութաբեր չէ, և գիտական կազմակերպությունները պետք է դասվեն շահույթ չհետապնդող կազմակերպությունների շարքին: Հարկավ, միշտ չէ, որ գիտությունը ամենօրյա ակնառու շահույթ է բերում: Բայց հայտնի է, որ նա հասարակության ամենաշահութաբեր գործոնն է, և բնական է, որ պետք է շահույթ հետապնդի: Ակնհայտ է նաև, որ ժամանակակից էներգետիկան, արդյունաբերությունը, կապը, տրանսպորտը, գյուղատնտեսությունը շահութաբեր են: Բայց չէ՞ որ նրանց բարձր շահութաբերության հիմքում ընկած են գիտության ձեռքբերումները, գիտական նոր արդյունքները: Ուրեմն գիտությունը բազմակողմանի շահութաբեր է և, բնական է, շահույթ հետապնդող: Այսպիսով, գիտությունը միշտ էլ պետք է ստանա շահույթի իր մասնաբաժինը:

Վերջապես, գիտությունը կարող է թեթևացնել իր հոգսերը՝ վերանայելով հանրապետության բյուջեով ֆինանսավորվող գիտական կազմակերպությունների ցուցակը, թողնելով այնտեղ միայն արժանիներին՝ այն կազմակերպություններին, որոնք ստացել են միջազգային ճանաչում գտած գիտական արդյունքներ, ստեղծել են հայտնի գիտական դպրոցներ, կատարել են միջազգային հնչեղություն ունեցող հայագիտական հետազոտություններ, իրենց ստացած արդյունքներով սատարել են հանրապետության տնտեսության զարգացմանը:

Հաճախ սահմանափակ ֆինանսական հնարավորություններն առիթ են տալիս գիտությունից հեռու քաղաքական որոշ գործիչների՝ ոչ հեռատես հասարակագետների թելադրանքով հայտարարել, թե եթե ֆինանսական հնարավորությունները չեն ներում, թող այլ գիտություններով զբաղվեն հարուստ երկրները, իսկ մենք կզբաղվենք միայն հայագիտությամբ: Այդ հիվանդ գաղափարների անհեթեթությունը լավ էր հասկանում Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ Հովսեփ Օրբելին, որը Ակադեմիայի կազմը ձևավորելիս 22 հիմնադիր անդամներից 17-ը առաջադրեց ֆիզիկամաթեմատիկական և բնական գիտություններից: Նա լավ գիտեր, որ հայագիտության զարգացման համար պետք է հանրապետությունում ունենալ բազմաբովանդակ գիտական մթնոլորտ, որ մի գիտությամբ, թեկուզ և ազգային ու բազմաբովանդակ, առողջ գիտական մթնոլորտ ստեղծել հնարավոր չէ:

Անկասկած, վերոհիշյալ հարցերը բարդ են և բազմաշերտ, դրանք առնչվում են համահանրապետական, տնտեսական, սոցիալական և քաղաքական հիմնախնդիրներին: Բայց ուշ թե շուտ այդ հարցերը պետք է լուծվեն (ըստ իս, այդ հարցերի օպտիմալ լուծումները հետաքրքիր են ոչ միայն գիտության տեսակետից): Դրանք կարող են իրատեսական լուծումներ ստանալ միայն համակարգային վերլուծության պայմաններում: Համադրելով այդ բոլոր հանգուցային հիմնախնդիրները, օգտվելով գիտական վերլուծության կանոններից՝ հնարավոր կլինի գտնել դրանց առավել ընդունելի լուծումները: Մենք պետք է ունենանք Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներ և իրավական փաստաթղթեր, որոնք պետք է լինեն գիտականորեն հիմնավորված, հստակ ձևակերպված և ճկուն, որպեսզի հետագայում՝ ենթաօրենսդրական ակտեր և նորմատիվային փաստաթղթեր ստեղծելիս, ստիպված չլինենք ընդունելու բազմաթիվ բացառություններ: Դժբախտաբար, միշտ չէ, որ մեր օրենքներն այդպիսին են:

Սակայն այդ ամենի համար պետք է ունենալ Հայաստանի Հանրապետության կառուցման, զարգացման և գոյատևման գիտականորեն հիմնավորված ստրատեգիան և դրանից բխող տակտիկական քայլերը, որոնք ընդունելի են ժողովրդի կողմից և հավատ են ներշնչում:

Ամենօրյա խնդիրների տակտիկական, թեկուզ և լավ լուծումներով, կայուն ժողովրդավարական պետություն ստեղծել հնարավոր չէ:

Մենք պետք է հստակ գիտենանք, թե ո՛ւր ենք գնում, ինչպիսի՛ պետություն ենք ստեղծում: Դարավոր գիտություն, կրթություն և մշակույթ ունեցող հայ ժողովուրդը և նրա պետությունը չեն կարող գտնվել քաղաքակիրթ աշխարհի հեռավոր և մութ անկյուններից մեկում:

Ես դեմ եմ նաև, երբ պետական, քաղաքական և տնտեսական որոշ գործիչներ, երկիրը փրկելու համար, համառորեն ուզում են Հայաստանը դարձնել զանգվածային զբոսաշրջիկության երկիր՝ հանրապետության ողջ տարածքը ծածկելով հյուրանոցների, ռեստորանների, սրճարանների, խաղատների, գիշերային ակումբների խիտ ցանցով, ժողովրդին թողնելով միայն քիչ թե շատ կրթված սպասավորների դերը: Ըստ իս, Հայաստանի Հանրապետությունը պետք է լինի առաջատար գիտության, կրթության և մշակույթի երկիր՝ ուժեղ արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ, որում կարող է տեղ գտնել նաև զբոսաշրջիկությունը:

Գիտության, կրթության և մշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքով է որոշվում պետության վարկն աշխարհում: Նույն հատկանիշով էլ որոշվում է երկիրը կառավարողների քաղաքակրթության աստիճանը:

Կոպենհագեն - Երևան, մարտ 2005 թ.

➢1 ձևավորում է նորմալ գենետիկական փոփոխականություն (օրինակ՝ աչքերի գույնի, արյան խմբերի, մտավոր ընդունակությունների դրական փոփոխությունները), իսկ երկրորդը, որին անվանում են նաև պոպուլյացիայի գենետիկական բեռ, կարող է առաջացնել չկանխատեսված ամլություն, բնածին արատներ, ժառանգական կամ ժառանգական հակվածությամբ օժտված հիվանդություններ: Տարբեր տվյալներով երեխաների և չափահասների գենետիկական բեռը կազմում է 4-10%. դրանց զգալի մասը մահանում են վաղ մանկական հասակում, իսկ մյուսների մոտ հասուն շրջանում դրսևորվում են այնպիսի արատներ, ինչպիսիք են՝ սիրտ-անոթային, հոգեկան հիվանդությունները, ստամոքսի խոցը և այլն: Նկատի ունենալով նաև այդ ախտաբանությունները, բնակչության գենետիկական բեռի գումարային ծավալը զարգացած երկրներում կարող է հասնել մինչև 67%-ի:

Հաշվի առնելով առողջ սերնդի պահպանության անհրաժեշտության նաև սոցիալական կողմը, կարելի է տալ դրա երրորդ բնութագրությունը: Պոպուլյացիայի գենոֆոնդը բնական կարևորագույն ռեսուրս է, որի վրա հիմնվում է հասարակության աշխատանքային, մտավոր և մշակութային պոտենցիալը, ինչպես նաև դրա անդամների առողջությունը: Այս բնութագրումից երևում է, որ մարդու առողջության և ժառանգականության պահպանությունը հանդիսանում է գենետիկական անվտանգության առարկա, որը ենթադրում է գենոֆոնդի պաշտպանվածությունը սոցիալական և էկոլոգիական գործոնների անբարենպաստ ներգործությունից: Այս ամենի հիման վրա որպես պոպուլյացիայի գենետիկական պրոցեսի բնականոն զարգացման չափանիշ ընդունվում է սերունդներում կայուն վերարտադրման հնարավորությունը և գենետիկական բազմազանության որակական մակարդակի պահպանումը՝ գենետիկական բեռի կայուն ծավալի պայմաններում:

Ցավոք, պետք է փաստել, որ ինչպես շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում, վերջին տասնամյակում գենոֆոնդի պահպանությունը չի համապատասխանում բերված չափանիշներին: Դրա հետևանքով մեր երկրում, ամբողջությամբ վերցված, մահացությունը գերազանցում է ծնելիությանը: Դա, ինչպես նաև սոցիալական այլ գործոններ, հանգեցնում են ազգաբնակչության թվաքանակի կրճատմանը, որը մեզ համար, որպես փոքրաթիվ ազգաբնակչություն ունեցող երկրի, չի կարող լուրջ մտահոգության տեղիք չտալ:

Գենոֆոնդի կայունության պահպանության մեջ չափազանց կարևոր է մուտացիաների գործոնը: Մուտացիաները գենետիկական նյութի՝ ԴՆԹ-ի քանակի կամ կառուցվածքի մեջ թռիչքաձև դրսևորվող ժառանգվող փոփոխություններն են: Սակայն գենետիկական փոփոխականության հետագա .աճը նոր մուտացիաների հաշվին, որպես կանոն, հանգեցնում է ոչ բարենպաստ հետևանքների: Այդ պատճառով գենաթունավոր նյութերով շրջակա միջավայրի կեղտոտումը մեծ սպառնալիք է ստեղծում ամբողջ կենդանիի գենետիկական անվտանգության համար:

Կենսաբանական հետևանքների իմաստով գոյություն ունեն սոմատիկ և գամետային մուտացիաներ: Սոմատիկ մուտացիաները կատարվում են մարմնական բջիջներում և դրսևորվում են այն մարդկանց մոտ, ովքեր անմիջականորեն ենթարկվում են գենաթունավոր նյութերի ներգործությանը: Այդ դեպքում օնկոգենեզի ակտիվացման հետևանքով աճում է ուռուցքաբանական հիվանդությունների ռիսկը, իջնում է օրգանիզմի իմունային պաշտպանվածությունը, կրճատվում է կյանքի տևողությունը: Գամետային մուտացիաները ծագում են սեռական բջիջներում, որոնք այնուհետև դրսևորվում են սերնդում և մեծ վտանգ ստեղծում ապագա սերունդների առողջության համար, մեծացնելով պոպուլյացիայի գենետիկական բեռը: Գենաթունավոր ներգործությունները հատկապես կործանարար են ներարգանդային զարգացման շրջանում, որոնք հանգեցնում են պտղի բնածին այլանդակությունների ձևավորմանը:

Ըստ գենետիկական նյութի վնասվածքների մուտացիաները բաժանվում են գենոմային (վերաբերվում են քրոմոսոմների թվի փոփոխություններին), քրոմոսոմային (վերաբերվում են քրոմոսոմների կառուցվածքի փոփոխություններին) և գենային կամ կետային (շոշափում են ԴՆԹ-ի կառուցվածքի մեկ կամ մի քանի նուկլեոտիդներին): Գենոմային և քրոմոսոմային գրեթե բոլոր մուտացիաները անհամատեղելի են կյանքի հետ, քանի որ դրանց կրողները մահանում են օնտոգենեզի սաղմնային կամ վաղ մանկական շրջանում, հանգեցնում են մորֆոֆիզիոլոգիական ու մտավոր ձևախեղումների: Նման տիպի ախտաբանություն է Դաունի համախտանիշը, որի հաճախականությունը կազմում է մեկ հիվանդ 700 նորածինների հաշվով: Չնայած գենային մուտացիաները այս կամ այն չափով իջեցնում են առանձնյակների հարմարողականության ընդունակությունը, սակայն դրանց որոշ մասը (որոնք օժտված են վեցմատնանիությամբ, լանամաշկությամբ) կարող են ապրել նորմալ կյանքով և սերունդ ունենալ: Այժմ գենային մուտացիաների հետ կապված ժառանգական հիվանդությունները լայն տարածում են գտել: Հայտնի են մոտ 6 հազ. նման հիվանդություններ, որոնք գումարային հաճախականությամբ պոպուլյացիայի մեջ կազմում են 1%:

Մուտացիաները մարդու սեռական բջիջներում տեղի են ունենում ինքնաբերաբար մոտ 1.10^{-5}-1.10^{-6} հաճախականությամբ: Դա նշանակում է, որ 100 հազ. սպերմատոզոիդներից մեկը որևէ գենի մեջ կրում է մուտացիա: Սակայն մարդու գենոմում գեների թվի հաշվարկով գրեթե յուրաքանչյուր սեռական բջիջ պարունակում է մուտանտ գեն: Գենոմային և քրոմոսոմային մուտացիաների քանակը աճում է ծնողների տարիքին զուգընթաց: Այդ է պատճառը, որ Դաունի համախտանիշով ծնվող երեխաների հավանականությունը մեծ է 35 և ավելի տարիք ունեցող կանանց մոտ:

Բնության մեջ մուտացիոն գործոնները մշտապես գոյություն ունեցել են: Սակայն բոլորովին այլ իրավիճակ ստեղծվեց, երբ շրջակա միջավայրում հայտնվեցին նոր մուտագեններ, որոնք աստիճանաբար սկսեցին բարձրացնել մուտացիաների հաճախականությունը: Ըստ իրենց բնույթի մուտագենները բաժանվում են երեք խմբի՝ ֆիզիկական (իոնիզացնող ռադիացիան, ուլտրամանուշակագույն ճառագայթները, էլեկտրամագնիսական դաշտերը, բարձր և ցածր ջերմաստիճանները), քիմիական (ներառում են ալկիլացված միացությունները, գերօքսիդները, ծանր մետաղները, բլորացված ածխաջրածինները, պոլիցիկլային արոմատիկ ածխաջրածինները և այլն), կենսաբանական (վիրուսները, հակավիրուսային պատվաստանյութերը, օտար ԴՆԹ-ն և ՌՆԹ-ն, ներմակաբույծների կողմից արտադրված թույները): Պետք է ընդգծել, որ քիմիական մուտագենների մեծ մասը միաժամանակ հանդիսանում է ուռուցքածին, իսկ մի քանիսը՝ նաև հրեշածին (տերատոգեն):

Բերված մուտագենների մի մասը անթրոպոգեն ծագում չունեն և հանդիսանում են կենսոլորտի բնական տարրեր: Անթրոպոգեն մուտագենները բնության մեջ երևան եկան այն շրջանից, երբ մարդը սկսեց օգտվել կրակից: Քիմիական մուտագենեզը բացահայտվեց անցյալ դարի 40-ական թվականներին, երբ առաջին անգամ իպրիտը օգտագործվեց որպես մարտական թունավոր նյութ: Ներկայումս մարդու կողմից սինթեզվել են մոտ 9 մլն քիմիական միացություններ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում նաև մուտագենները: Հսկայական քանակությամբ մուտագեն նյութեր են արտանետում և միջավայրը կեղտոտում արդյունաբերական ձեռնարկությունները և փոխադրամիջոցները: Գյուղատնտեսության մեջ օգտագործվող պեստիցիդների մեծ մասը օժտված են մուտագեն, ինչպես նաև կանցերոգեն հատկությամբ: Բազմաթիվ են մուտագեն գործոնները նաև մեր առօրյայում՝ ծխախոտի ծուխը, կոֆեինը, սննդային լրանյութերը, կոնսերվանտները, ռենտգենյան ճառագայթներով բուժումները, դեղամիջոցների մի մասը, դիմահարդար միջոցները, շինարարական և երեսապատման նյութերը, ներկերը և այլն: Զանազան գրիպային համաճարակների բռնկումները ընդլայնում են նաև մուտացիաների կենսաբանական գործոնների սահմանները: Որոշ վիրուսներ (օրինակ՝ կարմրախտի վիրուսը) օժտված են տերատոգեն էֆեկտով և մեծ վնաս են ներկայացնում հղի կանանց համար:

Ռադիոակտիվ ճառագայթման մուտագեն ներգործության վերաբերյալ լուրջ նախազգուշացում հանդիսացավ Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ատոմային ռմբահարումը Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին: Սակայն այն ժամանակ լրիվ հասկանալի չէր ռադիացիայի գենետիկական վտանգը, քանի որ գիտությունը դեռևս չէր տիրապետում մուտացիաների հաճախականության հաշվառման եղանակներին: Միայն XX դարի վերջերին դառը փորձից ելնելով մարդկությունը գիտակցեց ռադիացիայի գլոբալ ներգործությունը ոչ միայն ֆաունայի ու ֆլորայի, այլև մարդկանց վրա: Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի հետևանքով ռադիոակտիվ կեղտոտման ենթարկվեց բազմամիլիոն ազգաբնակչությամբ հսկայական տերիտորիա: Ստանալով ռադիացիայի զգալի չափաբաժիններ, հարյուր հազարավոր մարդիկ մասնակցեցին այդ վթարի հետևանքների վերացմանը: Այդ մարդկանց արյան բջիջներում աստիճանաբար երևան եկան քրոմոսոմների ձևախեղումներ, վահանաձև գեղձի ուռուցքներ, իսկ սերունդը ծնվում է տարբեր արատներով:

Ներկայումս ուշադրություն են գրավում քիմիական նոր մուտագեններ՝ դիոքսանները, որոնք գոյանում են աղբի այրման հետևանքով: Դրանք մարդու վրա կարող են ներգործել փոքր դոզաներով և պատճառ դառնալ տարբեր ախտածնությունների:

Մարդու համար ոչ պակաս վտանգավոր են նաև բակտերիաների ու վիրուսների միկրոաշխարհում գոյություն ունեցող տրանսֆորմացիաները, որոնց հետևանքով կարող է բարձրանալ հիվանդությունների հարուցիչների ախտահարույց կարողությունը (վիրուլենտությունը), իսկ որոշ անվնաս միկրոօրգանիզմներ կարող են վերափոխվել ախտահարույցների:

Վերը բերվածը կասկած չի հարուցում, որ շրջակա միջավայրում մուտագենների ներգործությամբ մուտացիաների բեռի կուտակումը կործանարար ներգործություն կարող է ունենալ գենոֆոնդի վրա, քանի որ մուտացիաների մեծ մասը իջեցնում են առանձնյակների հարմարողականության ընդունակությունը, հաճախ հանգեցնելով մահացու ելքի: Այստեղից հետևում է նախապահպանական միջոցառումների անհապաղ կիրառման անհրաժեշտությունը, որոնք կարող են թեթևացնել մուտացիաների բեռը: Մինչև միջավայր ներմուծելը պետք է ստուգվեն սինթեզվող միացությունների մուտագեն և կանցերոգեն հատկությունները: Շրջանառությունից պետք է հանվեն մուտացիաներ առաջացնող նյութերը, դրանք փոխարինելով ավելի անվնաս համանմաններով: Անհրաժեշտ է աստիճանաբար արգելել արդյունաբերության, գյուղատնտեսության, բժշկության մեջ և կենցաղում օգտագործվող այն նյութերը, որոնք գենաթունածին ներգործություն ունեն մարդու վրա: Ավելի հեռանկարային կարող են լինել այն միջոցառումները, որոնք նպաստում են մուտագենների նկատմամբ մարդու օրգանիզմի դիմացկունության բարձրացմանը: Օրգանիզմում ֆերմենտային հատուկ համակարգերն իրենք պայքարում են մուտացիաների ներգործությունների դեմ՝ վերականգնելով ԴՆԹ-ի վնասվածքները: Այդ համակարգերի ակտիվությունը կարելի է բարձրացնել հակամուտագենների օգնությամբ, որոնց մեջ մտնում են C և E վիտամինները, ինտերֆերոնը, որոշ բույսերի էքստրակտներ և այլն:

Ներկայումս գենային ինժեներության մեթոդների զարգացման շնորհիվ հնարավոր է դառնում նաև որոշ հիվանդությունների դեպքում գենային թերապիայի կիրառությունը՝ նորմալ գենետիկական նյութի փոխպատվաստման ճանապարհով:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք գոյություն չունի մարդկային հասարակության կյանքի որևէ կողմ, որը չազդի մարդու գենոֆոնդի վրա: Այդ իմաստով գենետիկական մոնիտորինգի մեթոդների լայն օգտագործումը հանդիսանում է արմատական պայման՝ պոպուլյացիայի գենետիկական անվտանգությունը ապահովելու համար:

Տեր ողորմեա՛...

ՀԱՅԱՍՏԱՆ.

Երեք պատկեր «Նեյշնլ Ջեոգրաֆիկից»

Հայերն աղոթում են...



Ցուցադրում են նորաձևություններ...

Գոյատևում են...

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՆԳ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Միջազգային ասպարեզում հետզհետե ավելի է մեծանում հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ: Աշխարհի տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանության հանդեպ ձևավորվում են առարկայական պատկերացումներ: Այն ընկալվում և գիտակցվում է իբրև մարդկության դեմ կատարված հրեշավոր ոճրագործություն: Խնդրի ճշգրիտ ըմբռնմանը նպաստել են, անշուշտ, պատմագիտական մի շարք աշխատություններ, փաստաթղթերի ժողովածուներ: Քաջ գիտակցելով հիշյալ իրադարձությունների բացահայտման գործում նաև ականատես-վերապրողների հաղորդած վկայությունների պատմաճանաչողական դերն ու նշանակությունը, բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազլյանը, սկսած 1955 թ., շուրջ 50 տարիների ընթացքում, անձանձիր հետևողականությամբ ականատես-վերապրողներից գրառել, ձայնագրել, տեսագրել և ուսումնասիրել է փաստավավերական ժողովրդական վկայությունները, որոնցից յուրաքանչյուրն իրավաբանորեն ապացուցողական արժեք է ներկայացնում Հայ դատի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

Վ. Սվազլյանը Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ է հրատարակել, գիտական շրջանառության մեջ դնելով սկզբնաղբյուրային արժեք ներկայացնող ժողովրդական տարաբնույթ այդ նյութերը:

Հայոց ցեղասպանության 90-ամյա հիշատակի նախօրյակին ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի և Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից, ինչպես նաև ՀՀ կառավարության հոգածությամբ Երևանում լույս է ընծայվել Վերժինե Սվազլյանի «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» խորագրով գիրքը չորս լեզուներով, անգլերեն (թարգմանիչ, Տիգրան Ծուլիկյան), ֆրանսերեն (թարգմանիչ, Սիդա Չարխչյան), գերմաներեն (թարգմանիչ, Լևոն Սարգսյան), ռուսերեն (թարգմանիչ, Գայանե Հարությունյան): Իսկ Ստամբուլում (Թուրքիա) "Belge" հրատարակչությունը, մարդու և ազգերի իրավունքների անկոտրում ու նվիրյալ պաշտպան, առաջադեմ թուրք մտավորական, քաղաքական գործիչ Ռաքիպ Զարաքոլուի խմբագրությամբ լույս է ընծայվել նաև հիշյալ գրքի թուրքերեն տարբերակը: Աշխատությունը համալրված է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, ռուսերեն և հայերեն ամփոփումներով, ականատես-վերապրողների լուսանկարներով և 1915-1922 թթ. Օսմանյան Թուրքիայում երիտթուրք կառավարության իրականացրած արևմտահայերի տեղահանության և ցեղասպանության մասին գաղափար տվող գունավոր ուղեցույց քարտեզով:



Սույն ուսումնասիրությամբ պատմաբանագիտության մեջ առաջին անգամ լուսաբանվում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ հուշապատումների պատմափաստագրական-առարկայական էությունը, նրանց տիպաբանական և ժանրային առանձնահատկությունները, հետազոտվում են հուշապատումի գլխավոր անձի, ականատես-վերապրողի բարոյահոգեբանական խառնվածքի, աշխարհայացքի և անհատականության մի շարք կարևոր հատկանիշները: Ըստ հեղինակի. «...Առարկայորեն վերարտադրելով տվյալ ժամանակաշրջանի կյանքը, նիստ ու կացը, բարքերը, քաղաքական-հասարակական հարաբերությունները, վերապրողների հաղորդած հուշերն անմիջական են, ճշմարտացի, վավերական և ունեն հավաստի վկայությունների արժեք»:

Վ. Սվազլյանն իր ուսումնասիրության սկզբում («Ժողովրդական վկայությունների տիպաբանական առանձնահատկությունները» բաժին) ներկայացնում է գիտատեսական հետազոտություն, որտեղ, համեմատելով պատմական Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ 100 տեղավայրերի սեռատարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների կողմից պատմված հուշերի առանցքային բովանդակության համանմանությունը, եզրակացնում է, որ դրանցից յուրաքանչյուրն իր եզակի ինքնատիպությամբ հանդերձ, միմյանց հաստատող, շարունակող, լրացնող ու ամբողջացնող վկայություններ են, միտված անձնականից ու առարկայականից դեպի համընդհանուրն ու համազգայինը: Բնաբան դարձնելով իր 660-ից ավելի ականատես-վերապրողներից մեկի, Տիգրան Օհանյանի (ծնվ. 1902 թ., Կամախ) «Իմ անցյալը իմ անցյալը չէ միայն, այլ նաև իմ ժողովրդի անցյալն է» իմաստախորհուրդ խոսքը, Վ. Սվազլյանը հանգում է գիտական ճիշտ եզրակացության, ըստ որի, «ականատեսների հուշերն իրենց ներքին բովանդակությամբ բնութագրում են ոչ միայն տվյալ անհատին ու նրա միջավայրը, այլև ողջ հավաքականությանը, դառնալով հայ ժողովրդի պատմական հիշողությունը»:

Հեղինակի մի այլ եզրահանգմամբ, ժողովրդի պատմական հիշողությունը նրա ազգային ինքնության բաղադրիչ մասն է և այն երբեք չի մեռնում, այլ փոխանցվում և հարատևում է սերնդից սերունդ:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին («Հայոց ցեղասպանության ընթացքը ըստ ականատես վերապրողների վկայությունների» բաժին) երիտթուրք կառավարության կազմակերպած հայ երիտասարդների զորահավաքի, զինահավաքի, հայ մտավորականության ձերբակալման, անզեն ու անզեկ մնացած կանանց ու երեխաների բռնի տեղահանության, ողջակեզի, կոտորածի և պատմական այլ դժնդակ իրադարձությունների անմիջական տպավորությունների ներքո ստեղծված ժողովրդական տարաբնույթ հայերեն և թուրքալեզու երգերը ևս, ըստ Վ. Սվազլյանի, հագեցած են խոր պատմականությամբ: Նման պատմական երգերի ժողովրդական բնույթը հեղինակը լուսաբանում է հիմք ընդունելով դրանց բազմապիսի տարբերակների ու փոխակերպումների իրողությունը: Հայկական ծագմամբ թուրքալեզու պատմական երգերի առկայությունը մեզանում Վ. Սվազլյանը պայմանավորում է Օսմանյան Թուրքիայի որոշ գավառներում դեռևս ենիչերիների ժամանակաշրջանից հայերեն խոսքի հանդեպ գոյություն ունեցող քաղաքական որոշակի արգելքներով:

Ուսումնասիրության հեղինակն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է համիդյան ջարդարար քաղաքականությանը հաջորդած երիտթուրք կառավարության որդեգրած գաղափարախոսությունը, որի նպատակն էր բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել և թուրքացնել հայերին ու քրիստոնյա մյուս ժողովուրդներին, ստեղծել համաթուրանական, համաիսլամական համընդհանուր տերություն, Միջերկրական ծովից մինչև Ալթայի երկրամաս:

Ուսումնասիրության մեջ, հենվելով ականատեսների հաղորդած վկայությունների վրա, հեղինակը ներկայացնում է Թուրքիայի 1908 թ. Սահմանադրության ընդունման հետ կապված հայերի հույս ու հավատի, ցնծության մթնոլորտը, որը մեկ տարի չլրացած, 1909 թ. վերածվում է հուսախաբության, երբ Ադանան և նրա շրջակա հայաշատ գյուղերը իթթիհատականների ատելության թիրախ են դառնում:

Հայոց ցեղասպանության (1915-1922 թթ.) պատմաքաղաքական իրադարձությունների այդ ամբողջ ընթացքը ներկայացնելիս հեղինակը, որպես փաստավավերական սկզբնաղբյուրներ վկայակոչում է ականատես-վերապրողների հաղորդած հուշերն ու պատմական բնույթի ժողովրդական երգերը: Պատմագիտական վերլուծությամբ հեղինակը կարևորում է դրանց բացառիկ դերը, ոչ միայն իբրև անցյալի վկայություններ, այլև որպես ապագայի նախազգուշացում: Ցավոք, միջազգային հանրությունը ժամանակին չսաստեց և ըստ արժանվույն չդատապարտեց 20-րդ դարասկզբին գործադրված առաջին, Հայոց ցեղասպանությունը, և, որպես հետևանք, ծնունդ առավ ֆաշիզմը, իսկ մեր օրերում՝ միջազգային ահաբեկչությունն իր անկանխատեսելի դրսևորումներով և համաշխարհային աղետալի վտանգավորությամբ: Քանզի, անպատիժ մնացած հանցագործությունները կրկնվում են ի վնաս մարդկության:

Ուսումնասիրությունն ավարտվում է հեղինակի հետևյալ եզրակացությամբ. «...Ահա թե ինչու առանձնապես կարևորվում է Հայոց ցեղասպանության պատմական ողջ ընթացքի, անմեղ նահատակների ու կորցրած երկրի մասին ականատես վերապրողների փաստավավերական, ժողովրդական վկայությունները սույն ուսումնասիրությամբ լույս աշխարհ հանելն ու գիտական շրջանառության մեջ դնելը, քանզի ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՃԻՐ է, որը բացահայտվելու է նաև վկաների օգնությամբ: Իսկ ամենամեծ վկան ինքը՝ Ժողովուրդն է, **որը, ցավագնորեն վերապրելով, պատմել ու դեռ շարունակում է պատմել՝ վկայելով իր ողբերգական անցյալը: Անցյալ, որը հայ ժողովրդի անցյալն է, նրա պատմությունը, նրա պատմական հավաքական հիշողությունը, որը պետք է ներկայացվի աշխարհին ու մարդկության արդար դատին: Ուստի ժամանակն է, որ ներկայիս Թուրքիայի Հանրապետության կառավարությունը ևս քաջություն ունենա ընդունելու ինչպես գրավոր, նույնպես և բանավոր փաստերով հիմնավորված, ապացուցման կարիք չունեցող, պատմական այն բացահայտ ճշմարտությունը, որը կոչվում է Հայոց ցեղասպանություն»:**

Ըստ հիշյալ գրքերի խմբագիր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի. «...Աշխատությունն ունի հույժ պատմական, անգամ քաղաքական արժեք ու նշանակություն, մասնավորապես այնտեղ զետեղված Հայոց ցեղասպանության սահմռկեցուցիչ տեսարանները պատկերող բազմաթիվ հուշապատումներով և դերզորյան տառապանքներն ու ողբերգական մտորումներն արձանագրող ժողովրդական հայերեն ու թուրքալեզու երգերով: Կատարված է տքնաջան ու շնորհակալ մեծ աշխատանք Հայոց ցեղասպանությունից վերապրողների (որոնք արդեն չկան) խամրող հիշողությունից և հավերժ մոռացության վտանգից հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ողբերգական ու հերոսական պատմության անզուգական հուշերն ու երգերը փրկելու և անմահացնելու ուղղությամբ: ...Սույն ուսումնասիրության մեջ հեղինակն իր գրառած հարուստ ու բազմազան նյութերը հմտորեն զուգակցել է պատմական ստույգ փաստերի հետ, և ժողովրդական այդ նյութերը դարձել են պատմական ճշմարտությունները հավաստող, հիմնավորող, մանրամասնող ժողովրդական յուրօրինակ վավերագրեր: Հարկ է նշել, որ հեղինակն առաջինն է գիտական շրջանառության մեջ դրել Հայոց ցեղասպանության շուրջ հյուսված հիշյալ նյութերը՝ հատկապես ժողովրդական հուշերն ու թուրքալեզու երգերը: ...Ականատեսների այդ հուշերը և մանավանդ թուրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն հայ ժողովրդի ողբերգական այդ շրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին ժողովրդական հուշերով և հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով»:

Այսպիսով, հայ ժողովրդի հավաքական պատմական հիշողության վերաբերյալ Վերժինե Սվազլյանի ուսումնասիրության անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, թուրքերեն տարբերակներն իրենց փաստավավերական ու պատմաքաղաքական նշանակությամբ իրենց նպաստը կբերեն Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու Հայ դատի հետապնդման անժամանցելի ջանքերին:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅ ԴԻՐՀԱՅՄԵՐ

Եվրոպական կենսաքիմիական ընկերությունների դաշնություն, Կենտրոնական և Արևելյան Եվրոպային օժանդակման աշխատանքային խմբի նախագահ

Եվրոպական կենսաքիմիական ընկերությունների դաշնության /ԵԿԸԴ/ Կենտրոնական և Արևելյան Եվրոպային օժանդակման աշխատանքային խումբը իր աշխատանքը վարեց 2004 թ. ապրիլի 24-29 Երևանում Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի /ԿՀԱ/ հրավերով, որը անդամակցում է ԵԿԸԴ-ին սկսած 2002 թվականից: Մասնակիցներն էին Ա. Ելսկայան, Պ.Քեմփբելը, Գ. Դիրհայմերը, Յա.Մոուբրեյը, Ա. Շեղլաչեկը, Կ. Վիրցը և Ի.Սաֆարիկը: Ընդունելությունը գերազանց կազմակերպել էին Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի նախագահ պրոֆ. Ա.Գալոյանը, Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի քարտուղար դր. Վ.Քնարյանը և ՀՀ ԳԱԱ միջազգային համագործակցության խորհրդի քարտուղար Կ. Գևորգյանը; Աշխատանքային խումբը հյուրընկալվեց չափազանց բարեկամական մթնոլորտում և ըստ արժանվույն գնահատեց հայտնի հայկական հյուրասիրությունը:

Երևանյան օրերի ընթացքում Կենտրոնական և Արևելյան Եվրոպային օժանդակման աշխատանքային խումբը ունեցավ մի շարք հանդիպումներ հայ գիտնականների և պետական այրերի հետ՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ ակադ. Ֆ.Սարգսյանի և ԿՀԱ անդամների, Բժշկական Ակադեմիայի պրեզիդենտ պրոֆ. Լ. Մկրտչյանի և Առողջապահության նախարարության փոխնախարարի, նաև Ակադեմիայի անդամների հետ /ի դեպ այս առիթով պրոֆ.Պ.Քեմփբելը դարձավ այդ Ակադեմիայի նորընտիր անդամ/, և վերջապես Հայաստանի Հանրապետության վարչապետ պարոն Ա.Մարգարյանի հետ: Այս հանդիպումների ընթացքում տրվել է բացատրական ԵԿԸԴ-ի ու աշխատանքային խմբի գործունեության մասին, և տեղի են ունեցել արդյունավետ զրույցներ: Հատուկ շեշտվել է, որ լավ բարձրագույն կրթությունը անհնարին է առանց լավ գիտական աշխատանքի: Այցելեցինք նաև մի քանի գիտահետազոտական ինստիտուտներ և կենտրոններ՝ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ, որը ղեկավարում է պրոֆ.Ա.Գալոյանը, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, որը ղեկավարում է պրոֆ.Կ.Ղարագյոզյանը (երկուսն էլ պատկանում են Գիտությունների ակադեմիային), Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարան (պրեզիդենտ պրոֆ. Վ.-Հակոբյան, որտեղ Կենսաքիմիայի ամբիոնի վարիչն է Մ. Աղաջանովը), Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետ (դեկան պրոֆ. Է.Ա.Գևորգյան, կենսաքիմիայի ամբիոնի վարիչ՝ Ա. Աղաջանյան, գենետիկայի ամբիոնի վարիչ Ռ. Հարությունյան):

Սույնս ներկայացվում են այն գիտահետազոտական գործունեությունները, որոնք իրականացվում են տարբեր ինստիտուտներում: Հ. Բունիաթյանի անվան Կենսաքիմիայի ինստիտուտը հատկապես զբաղվում է նեյրոքիմիայի բնագավառի ուսումնասիրությամբ, առանձնահատուկ ուշադրության արժանացնելով ուղեղի նոր նեյրոէնդոկրին իմունային համակարգը:

Նոր հիպոթալամիկ նեյրոարտազատիչ ցիտոկինների պաշտպանական արդյունավետությունն է ուսումնասիրվում ընդդեմ նեյրոդեգեներատիվ խանգարումների: Հետաքրքիր է ընդգծել, որ Երևանում նույն համակարգի վրա աշխատող մի քանի խմբեր արդեն իսկ մեծ թիվ են կազմում: Ի հավելումն դրան, այս խմբերը համագործակցում են Երևանի պետական բժշկական համալսարանի կենսաքիմիայի ֆակուլտետի հետ: Բունիաթյանի ինստիտուտը ունի մոտ 90 գիտաշխատողներ և համագործակցում է բազմաթիվ միջազգային կառույցների հետ: Աշխատանքային խումբը այցելել է արդեն որոշ լաբորատորիաներ, իսկ իրականացվող նախագծերը քննարկվել են գիտաշխատողների հետ: Ինչ վերաբերում է սարքավորումներին, մի քանի ապարատների բաղկացուցիչ մասեր, այդ թվում և նրանք, որոնք տրամադրվել են FEBS-ի կողմից SARS-ի միջոցով, այլևս սարքի չեն. (Gilson 305 խրոմատոգրամա բարձր ճնշման տակ, սպեկտրոնիկ 20-ի համար որոշ մասեր): Ի հավելումն դրան ինտերնետային կապի որակը բավական ցածր է: Շնորհիվ FEBS-ի, գրադարանը ունի բազմաթիվ գրքեր և ամսագրեր, որոնք մատչելի են բոլոր գիտնականների համար:

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում մեզ ասացին, որ ներկայումս բազմաթիվ գիտահետազոտական նախագծեր ընթացքի մեջ են: Սա մի ընդարձակ շինություն է մի շարք լաբորատորիաներով, որոնք նախատեսված են կենսաքիմիական հետազոտությունների համար:

Իրավիճակը որոշ առումներով մխիթարելի է Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, ուր բացակայում է ջեռուցման խնդիրը: Պրոֆ. Աղաջանովի լաբորատորիայում նեյրոդեգեներացիայի դեմ պաշտպանիչ միջոցի, ինչպես նաև պրոֆ. Գալոյանի նոր հիպոթալամիկ նեյրոպեպտիդների միջոցով Ալցհեյմերի հիվանդության ուսումնասիրություններն են իրականացվում: Լաբորատորիան հիմնականում քիմիական նյութերի և քիմիական ռեակտիվների կարիք ունի:

Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետում, Պրոֆ. Գևորգյանի լաբորատորիայում ուսումնասիրվում են հորմոնային գործողությունների, հատկապես էստրադիոլի, հիդրոկորտիզոնի և ինսուլինի մոլեկուլային և բջջային մեխանիզմները: Պրոֆ. Թռչունյանի լաբորատորիայում հետազոտական աշխատանքները հիմնականում վերաբերում են կենսաֆիզիկային և իոնային տրանսպորտային էներգետիկային և նրանց դերին մանրէական բջջային ֆիզիոլոգիայի բնագավառում: Եվ վերջապես պրոֆ. Հարությունյանի լաբորատորիայում գենաթունագիտության բնագավառում են իրականացվում հետաքրքիր հետազոտություններ:

Կենսատեխնոլոգիաների ինստիտուտը իր գործունեությունն ուղղում է բժշկության և սննդի արդյունաբերության բնագավառում համադրված է բժշկության և սննդի արդյունաբերության բնագավառում համադրված կամ մաքուր ամինաթթուների կիրառմանը: Չինա-հայկական Կենսահնձիներիայի և Զարգացման Կենտրոնի մասնաճյուղը հիմնադրվել է 2001թ. այս ինստիտուտում և մի կարևոր պայմանագիր է ստորագրվել: Համագործակցությունը բազմաթիվ օտարերկրյա կառույցների հետ ընթացքի մեջ է:

Հայ գիտնականների հետ բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների և քննարկումների ընթացքում աշխատանքային խմբի անդամները կենսաքիմիկոսների շրջանում անշուշտ նկատեցին բարձր մակարդակի գիտահետազոտական նախագծերի իրականացման պատրաստակամություն: Որոշ խմբերի հետազոտական թեմաները ընդգրկում են ոգևորող և նոր գիտական գաղափարներ, որոնք անշուշտ արժանի էին ֆինանսական աջակցության: Գիտաշխատողները պատրաստ էին ինչպես առաջարկությունների, այնպես էլ քննադատության, որոնք կվերաբերեին իրենց գիտական ձեռքբերումներում դրական փոփոխությունների ներմուծմանը և կատարելագործմանը: Շատ գիտաշխատողներ և լաբորատորիաներ դեռևս ունեն բավական ամուր կապեր և համագործակցում են ռուսական կարևորագույն կենսաքիմիական գիտահետազոտական կենտրոնների հետ, սակայն աշխատանքային խումբը կարևորեց անգլերեն լեզվով գիտական արդյունքների հրապարակման փաստը բարձր մակարդակի, փորձագետների գնահատականին արժանացած միջազգային ամսագրերում: Այնուամենայնիվ, համեմատաբար քիչ թիվ են կազմում այն մարդիկ, որոնք կարողանում են հաղորդակցվել անգլերեն լեզվով, նույնիսկ գիտահետազոտական և ակադեմիական շրջանակներում հանդիպումների ընթացքում բարգմանչի անհրաժեշտություն էր զգացվում փոխադարձ շփումն իրականացնելու համար: Ինչ վերաբերում է սարքավորումներին, ապա նրանց մեծ մասը բավական հնացած էին և ոչ պիտանի օգտագործման: Նույնը վերաբերում էր տեխնիկային, օրինակ մեզ հետ հանդիպած խմբերից բավական քիչ տոկոսն էին, մոտավորապես 2-3 խումբ, որոնք ներկայումս օգտագործում են համակցված ԴՆԹ-ի մեթոդները, որն անշուշտ ժամանակակից կենսաքիմիական հետազոտությունների ոլորտում ամենահանրահայտ և օգտակար տեխնիկաներից մեկն է համարվում:

Վարչապետի հետ հանդիպման վերջում աշխատանքային խումբը հանգեց հետևյալ եզրակացությանը.

• FEBS-ը կարող էր աջակցություն ցուցաբերել ժամանակակից կենսաբանական գիտության ոլորտում նոր սերնդի կրթման և վերապատրաստման գործում: Սակայն վտանգը կայանում է նրանում, որ այս մարդիկ հավերժ կլքեն Հայաստանը մինչև որ կառավարությունը ներդրումներ չկատարի ինֆրակառուցվածքային ոլորտներում:

• Աշխատանքային խումբը խորհուրդ կտար կառավարությանը մշակել մարտավարական ծրագիր՝ հասանելի ռեսուրսներից առավելագույն շահույթ ստանալու նպատակով: Մտահոգության առիթ է տալիս այն փաստը, որ որոշ ինստիտուտներ չեն աշխատել շուրջ կես տարի՝ ջեռուցում չլինելու պատճառով: Նման պայմաններում անհնար է խոսել մրցունակ և կենսունակ հետազոտական ծրագրերի իրականացման մասին:

• Վերջում կարծիք հայտնվեց այն մասին, որ մրցունակ և փորձագետների գնահատականին արժանացած պետական դրամաշնորհային համակարգ է անհրաժեշտ ստեղծել, որն անշուշտ կնպաստի հայկական տնտեսության զարգացմանը: Այն կօգնի օտարերկրյա համապատասխան ֆոնդերի ներգրավմանը:

Վարչապետը խոստացավ անել հնարավորինս:

Եզրափակիչ կլոր սեղանի շուրջ աշխատանքային խմբի անդամները առաջարկեցին.

• Հայ կենսաքիմիկոսներին Հայաստանում կազմակերպել Առաջատար դասընթացներ (Կ. Վիրտցը, որն ավելի երկար մնաց Հայաստանում լուրջ և առավել հանգամանալից ուսումնասիրեց այդ ծրագիրը):

• FEBS-ը անվերապահորեն ընդառաջ է գնում ինտերնետային կապի լավ որակ ապահովելու խնդրանքին (արբանյակային ափսեներ, սպասարկու սարքավորումներ, ենթակա համակարգիչներ):

• Կենսաքիմիայի եվրոպական ամսագրին անդամակցումը պետք է քննարկվի Հրատարակությունների հանձնաժողովի նախագահի կողմից, որը նաև տեղեկություն կհաղորդի անվճար ինտերնետային ամսագրերի մուտք ունենալու ծրագրի վերաբերյալ ըստ Հինարիի սխեմայի:

• Հայաստանին և նմանատիպ երկրներին պահանջվող սարքավորումների ցանկ է անհրաժեշտ կազմել և հրատարակել FEBS-ի տեղեկատվական թերթիկում և «Հայացք կենսաքիմիային» ամսագրում՝ SARS-ի-ի համար նվիրատվական աղբյուրների որոնման նպատակներով:

• FEBS-ը առաջարկում է SARS-ի միջոցով նվիրատվական սարքավորումների պահեստային մասերով ապահովել այնտեղ, ուր դրա անհրաժեշտությունը առավել սուր է զգացվում:

• Հայ կենսաքիմիկոսների ասոցիացիան կարողանա իր շարքերը համալրել բավական թվով գիտնականներով, քանզի դա կարևոր նախապայման է FEBS-ի համակարգում ընդգրվելու համար:

• Հայ գիտաշխատողները պետք է կարևորեն կարճ ժամանակահատվածով թանկարժեք սարքավորումների համատեղ օգտագործման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու գաղափարը, մի դիրքորոշում, որն արդեն կիրառվում է Բժշկական համալսարանի կողմից:

• Այն, որ գիտաշխատողները, հատկապես նրանք, ովքեր դեռ նոր են սկսում գիտական գործունեություն ծավալել, անգլերեն լեզուն առավել կատարյալ տիրապետելու գաղափարից առավել ոգևորվեն, քանզի այս կերպ նրանք կկարողանան հաստատել առավել կայուն գիտական կապեր օտար հետազոտողների հետ, որոնք աշխատում են համապատասխան ոլորտներում:

• Այն, որ արժանի երիտասարդ գիտաշխատողները նշանակվեն որպես խմբի առաջնորդներ այն կառույցներում ուր հնարավոր է աշխատանքներ իրականացնել կանխելու «ուղեղի արտահոսքի» պրոբլեմը Հայաստանում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ



2004 թվականին Նյու Յորքում Kluwer Academic (Pienum Publishers) հրատարակչությունը լույս ընծայեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն Արմեն Անուշավանի Գալոյանի գիրքը՝ «Brain neurosecretory Cytokines; Immune Response and Neurinal Survival» (Ուղեղի նեյրոսեկրետոր ցիտոկինները իմունային և նյարդային համակարգի գործունեության մեջ) անվամբ: Գրքում ամփոփվել են Ա. Գալոյանի և իր աշխատակիցների կողմից շուրջ 20 տարիների հիմնարար գիտական հետազոտությունների արդյունքները ուղեղի նոր նեյրոհորմոնների, ցիտոկինների հայտնաբերման, նրանց քիմիական կառուցվածքների պարզաբանման, սինթեզի, ինչպես նաև կենսաբանական հատկությունների մասին, որոնք նոր էջեր են բացում ուղեղի կենսաքիմիայի և նեյրոկենսաբանության զարգացման համար: Ստացված տվյալները ունեն ոչ միայն խոշոր տեսական, այլ նաև գործնական նշանակություն մի շարք իմունային, նյարդային, նեյրոդեգեներատիվ, նեյրոէնդոկրին, վարակիչ հիվանդությունների մոլեկուլային մեխանիզմների պարզաբանման և բուժման համար: Ակադեմիկոս Ա. Գալոյանի և աշխատակիցների կողմից հայտնաբերած ուղեղի նոր ցիտոկինները դարձել են ինչպես մեր հանրապետության, այնպես էլ աշխարհի մի շարք երկրների (ԱՄՆ, Կանադա, Գերմանիա, Ռուսաստան և այլն) ինստիտուտների գիտական հետազոտությունների առարկա (Ա. Գալոյանի ղեկավարությամբ):

Ահա թե ինչ էր գրում ԱՄՆ-ի խոշոր կենսաքիմիկոսները և իմունոլոգները ակադ. Ա. Գալոյանի վերոհիշյալ գրքի մասին, (տես գրքի արտաքին շապիկում).

Պրոֆ. Ա. Պրեոբրաժենսկի (ԱՄՆ)

«Այս գիրքը բաց է անում փայլուն հեռանկարներ նեյրոկենսաբանության մի շարք ուղղություններում: Այս մեծարժեք գրքի հրատարակությունը կխթանի նեյրոկենսաբանության իմունոլոգիայի և բժշկության զարգացումը»:

Պրոֆ. Ա. Բրեխեր (ԱՄՆ)

«Այս մենագրությունը արտացոլում է նեյրոքիմիայի, նեյրոէնդոկրինոլոգիայի, արյունաբանության և կլինիկական բժշկության ասպարեզի գիտական հանրության աճող ամենաբարձր պահանջները»:

Մեկ այլ առիթով ԱՄՆ-ի խոշորագույն գիտնական, Պասադենայի բժշկակենսաբանական ինստիտուտների տնօրեն, պրոֆեսոր Ռիչարդ Բինգը միջազգային ամսագրում՝ (Neurochemical Research-Նեյրոքիմիական հետազոտություններ) գրում է՝

«Ցիտոկինների նեյրոսեկրեցիայի երևույթի հայտնագործումը ակադ. Ա. Գալոյանի կողմից նոր էջ է բացում իմունոլոգիայում» (R. Bing, Neurochem. Research, 1999, N 9).

Ակադեմիկոս Ա.Ա. Գալոյանի գրքի շնորհանդեսի կազմակերպումը կունենա խոշոր նշանակություն Հայաստանում նեյրոկենսաբանության զարգացումը խթանելու համար: Այն յուրօրինակ աշխատություն է, որը ՀՀ կառավարությանը և հանրությանը ներկայացնում է մեր հանրապետությունում կատարվող առաջնակարգ հետազոտությունները:

ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՅԱՆ

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց: Վախճանվեց գիտության մեծ երախտավոր, համաշխարհային ճանաչում ունեցող լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Գևորգ Բեգլարի Ջահուկյանը:

Գ. Բ. Ջահուկյանը ծնվել է 1920 թվականի ապրիլի 1-ին, Կալինինոյի շրջանի Շահնազար (այժմ՝ Տաշիրի շրջանի Մեծավան) գյուղում: 1937-ին ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, իսկ 1941-ին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1942-43 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1945-ից մինչև իր կյանքի վերջը դասախոսել է պետական համալսարանում՝ դասավանդելով ժամանակակից հայոց լեզու, գրաբար, լատիներեն, լեզվաբանության պատմություն, համեմատական քերականություն, ընդհանուր լեզվաբանություն և այլ առարկաներ:

1947-ին պաշտպանել է թեկնածուական, 1955-ին՝ դոկտորական ատենախոսություններ: 1958-ին ստացել է պրոֆեսորի կոչում, 1968-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1974-ին՝ ակադեմիկոս:

Ականավոր հայագետի գիտական գործունեության մեջ կարևոր փուլ է սկսվել 1962-ից, երբ նա նշանակվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն: Գերազանցապես Գ. Ջահուկյանի ավելի քան քառասնամյա գիտակազմակերպչական գործունեությամբ են պայմանավորված լեզվի ինստիտուտի և ընդհանրապես հայ լեզվաբանության շատ ու շատ նվաճումներ:

Գ. Բ. Ջահուկյանը այն բացառիկ գիտնականներից է, որի գիտական հետազոտությունների շրջանակը արտակարգ լայն է և ընդգրկուն: Չկա հայերենագիտության մի բնագավառ, որտեղ նա ասած չլինի իր ծանրակշիռ և ուղենշային խոսքը:

Նա հայերենի համեմատական քերականության և հայոց լեզվի պատմության ամենաճանաչված մասնագետն է: «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959), «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (1967, ռուսերեն), «Հայոց լեզվի համեմատական քերականություն» (1982, ռուսերեն), «Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան» (1987, արժանացել է ՀՀ պետական մրցանակի) և մի շարք այլ աշխատություններում ու տասնյակ հոդվածներում Գ. Ջահուկյանը իրեն հատուկ գիտական խորաթափանցությամբ քննել և լուծել է հայոց լեզվի պատմության ու համեմատական ուսումնասիրության, հայերենի պատմության շրջանաբաժանման ու ընդհանրապես հնդեվրոպաբանությանն առնչվող բազմաթիվ կարևոր հիմնահարցեր:

Հայ բարբառագիտության բնագավառում շրջադարձային եղավ Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (1972) աշխատությունը, որը, հանրագումարելով այդ ասպարեզի նախորդ նվաճումները, սկզբունքորեն նոր ուղի է բացում հայ բարբառների դասակարգման և բարբառագիտական ուսումնասիրությունների հետագա ծավալման համար:

Գ. Ջահուկյանի գիտական ստեղծագործության մեջ հատուկ տեղ է գրավում արդի հայերենի ուսումնասիրությունը: «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969), «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974), «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» (1989) և այլ մենագրություններում Գ. Ջահուկյանը առաջ է քաշել լեզվաբանական նկարագրության նոր՝ լեզվի բովանդակության և արտահայտության պլանների հարաբերակցված քննության սկզբունքը, որի մշակումն ու կիրառությունը լեզվաբանական գիտության մեջ կապվում է իր անվան հետ: Այս կարգի հետազոտությունները մեծապես պայմանավորում են Գ. Ջահուկյանի ձեռք բերած վիթխարի նվաճումները նաև տեսական լեզվաբանության բնագավառում: «Լեզվաբանության պատմություն» (հ. 1 1961, հ. 2 1962), «Ընդհանուր և հայկական լեզվաբանություն» (1978) և այլ աշխատություններում քննարկված տեսական գաղափարները հանգեցնում են Գ. Ջահուկյանի կողմից մշակված համընդհանուր լեզվաբանական կաղապարի ամբողջական նկարագրությանը, որը հեղինակն իր կյանքի գործն էր համարում և բարեբախտաբար հասցրեց ավարտել և համաշխարհային գիտական հանրությանը ներկայացնել «Համընդհանուր լեզվաբանական տեսություն» ծանրակշիռ աշխատությունը՝ ռուսերեն, և անգլերեն: Ցավոք, մեծ գիտանականը չհասցրեց ամբողջացնել իր ևս մի հիմնարար աշխատություն՝ հայերենի նոր ստուգաբանական բառարանը:

Գ. Ջահուկյանի գիտական, կազմակերպչական և մանկավարժական բեղմնավոր գործունեությունը գնահատվել է ըստ արժանվույն: Նա գիտության վաստակավոր գործիչ էր, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, պարգևատրված է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» և բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով:

Գ. Ջահուկյանի պատկառելի գիտական ժառանգությունը ապահովել է նրա մշտական ներկայությունը գիտության մեծերի շարքում: Մեծ գիտնականի լուսավոր և առինքնող մարդկային կերպարը անջնջելի կմնա նրան ճանաչողների, հարյուրավոր սաների և ապագա սերունդների սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Կրթության և գիտության նախարարություն
Երևանի պետական համալսարան
ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հյուսիսի ջերմությունը

Մարդու բարեկամի մասին շատ է գրվել. նա մեր միակ բարեկամն է:

Այս երկու լուսանկարները պատմում են ծայր Հյուսիսի մարդկանց մասին, ովքեր ջերմությամբ, հոգատար են վերաբերվում բեռային շներին:

Վերջիններս այդ հոգատարությանը փոխհատուցում են մարդուն օգնելու իրենց պատրաստակամությամբ: Որքան սեր, ջերմություն կա այս էսկիմոսի հայացքի մեջ ու որքան ապահով են իրենց զգում այս փոքրիկ թուլաները:

Նայում ես այդ լուսանկարներին ու դրանք համեմատում մեր թաղամասերի հետ: Կուտակված աղբարկղեր, աղբակույտեր ու բաղցած շների ոհմակներ, որոնք կույտերի մեջ սնունդ են փնտրում ու գիշերները սկսում իրենց քաղցած կաղկանձը:

Ախր մենք քաղաքակիրթ ազգ ենք, ո՞ւր կորավ, ի՞նչ եղավ մեր քաղաքակիրթ ոգին: Այդ շների մեջ քիչ չեն ցեղականները, որոնք դուրս են նետվել, քանզի ծերացել են:

Մեր արվեստը, երգը, երաժշտությունը, կերպարվեստը վկայում են, որ մենք բարի ազգ ենք... Է՞., բարի մարդը կարո՞ղ է չսիրել բնությունը, շրջապատը և... իր բարեկամ շներին:

Նայեք նորից այս լուսանկարին կուշտ ու անբարտավան, նորագույն հայեր. երբևէ դուք փայփայե՞լ եք որևէ կենդանու...:

Կրկնակի շնորհանդես

Գիտությունների ազգային ակադեմիայում 2005 թ. հունիսի 3-ին տեղի ունեցավ «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի առաջին համարի և Է. Ղազարյանի ու Ս. Պետրոսյանի «Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքները» գրքի շնորհանդեսը: «Գիտության աշխարհում» հանդեսի առաջին համարում տեղ են գտել հայտնի գիտնականների՝ Շահեն Խաչատրյանի, Էդուարդ Ղազարյանի և Ալբերտ Կիրակոսյանի, Ասատուր Փաշայանի, Ալբերտ Պողոսյանի, Վլադիմիր Առուստամյանի և այլոց հոդվածները: Առաջին համարում տպագրվել է նաև Պարույր Սևակի անտիպ հոդվածներից մեկը. 1968 թ. հուլիսի 12-ին Պարույր Սևակը ելույթ է ունեցել ռադիոյով, որի տեքստը Ազգային արխիվից գտել և հանդեսին տրամադրել է Հովիկ Չարխչյանը:

Գիտությունների ազգային ակադեմիան իր պատմության մեջ առաջին անգամ հրատարակում է գիտահանրամատչելի հանդես «Գիտության աշխարհում»:

Հանդեսը տպագրվելու է տարեկան 4 անգամ, 5 մամուլ ծավալով: Հանդեսը գունավոր է և ունի հարուստ պատկերազարդում: Առաջին համարի տպաքանակը 1000 օրինակ է: Հանդեսի հիմնադիրն է ԳԱԱ նախագահությունը՝ ի դեմս ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆաղեյ Սարգսյանի: Հանդեսի գլխավոր խմբագիրն է ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար Էդուարդ Ղազարյանը: Խմբագրական կոլեգիայի կազմում ընդգրկված են հանրապետության հանրահայտ գիտնականները:

Գիտահանրամատչելի գրականության ստեղծման նպատակը գիտության այս կամ այն ոլորտը մատչելի ներկայացնելն է հանրությանը:

Մեր օրերում, երբ գիտության արագընթաց զարգացումը հանգեցրել է գիտական տեղեկատվության աննախադեպ աճի, առավել արդիական է դառնում գիտահանրամատչելի գրականության դերը: Գիտահանրամատչելի հրապարակումները ներկայացնում են գիտության տարբեր բնագավառների հայտնագործություններ և նվաճումներ, գիտական առանձին հիմնախնդիրներ, գիտության պատմության հարցեր, ինչպես նաև կենսագրական բնույթի նյութեր: Այդ հրապարակումները նախատեսված են հասարակության ամենալայն շրջանակների համար:

ԳԱԱ կարևորագույն գործառույթներից է նաև գիտելիքի տարածումը (մասսայականացումը), ինչը լուսավորչական միտվածություն ունի: Այս առումով ևս խիստ կարևորվում է գիտահանրամատչելի գրականության դերը: Իսկ Գիտությունների ազգային ակադեմիան անմասն չպետք է մնա գիտության մասսայականացման և հանրության լուսավորության խնդիրներից:

Հայ ժողովրդի պատմության մեջ գիտահանրամատչելի հանդես հրատարակվել է դեռևս միջնադարում: Առաջին հանդեսի հիմնադիրը եղել է Անանիա Շիրակացին իր «Մնացուրդք բանից»-ով, երկրորդը հրատարակվել է Մխիթարյան միաբանությունում, հեղինակն է Մխիթար Հերացին, հանդեսը կոչվել է «Ջերմանց մխիթարություն»: Իսկ ԽՍՀՄ տարիներին հասարակությունը հիմնականում առնչվում էր ռուսալեզու գիտահանրամատչելի գրականության հետ: Ի տարբերություն գիտության առանձին ճյուղերը ներկայացնող գիտահանրամատչելի հանդեսների, «Գիտության աշխարհում» հանդեսը տարբերվելու է գիտության բոլոր ոլորտների ընդգրկումով՝ ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, բնագիտական և հումանտար: Այս առումով «Գիտության աշխարհում» հանդեսի հրատարակումը եզակի երևույթ է Ակադեմիայի կյանքում: Նրա էջերում ծավալվելու են նաև բանավեճեր գիտության և հասարակական կյանքի վիճելի հարցերի շուրջ: Հանդեսում նախատեսվում է նաև տեղ հատկացնել նոր լույս տեսած գրքերին:

Նարինե ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գիտություն
Գլխավոր խմբագիր
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ,
հեռախոս՝ 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման
վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝
13.07.2005թ.
"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА